№ 226 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 226

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հոկտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 3 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Փարիզում՝ 8 Площадь Биржи.

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Երեւանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1. (ա. օ.) (տռ.) 1045. 100—8

ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Պետական Դուման սկսեց իր պարապմունքները:

Պատգամաւորների առաջին խօսքը եղաւ այն, թէ ինչ խնդիրների քննութիւններից սկսեն նրանք իրանց գործունէութիւնը:

Հոկտեմբերեանները որոշել են իբրև առաջին խնդիր օրակարգի համար դնել հողային խնդիրը և ապա թէ զուգընթաց և թէ յաջորդաբար առաջ մղել և միւս կարևոր խնդիրները:

Ժողովրդական ազատութեան պատկանող պատգամաւորները գտնում են, որ առաջնութիւն պէտք է տալ քաղաքացիական ազատութիւններին վերաբերեալ խնդիրների քննութեանը:

Անշուշտ՝ որոշ նշանակութիւն ունի խնդիրների մշակութեան հերթի և առհասարակ օրակարգի դասաւորութիւնը, բայց անկասկած է և այն, որ Դումայի գործունէութեան սպասող հասարակութիւնը կը հաշտվի այդ օրակարգի այս ու այն դասաւորութեան հետ, միայն թէ խնդիրների քննութիւնը իսկապէս լուրջ և ընդարձակ կերպով սկսվի և մշակվեն օրէնսդրական ձևով բարեկարգութեան այն ծրագիրները, որոնց սպասում է ժողովուրդը 1905 թւից ի վեր՝ հոկտեմբերի 17-ի հրովարտակի հրատարակութիւնից յետոյ:

Այժմ և չորս տարի սրանից առաջ տրամադրութիւնները միատեսակ չեն ժողովրդական խաւերում: Այն ժամանակ հասարակութեան մէջ տիրում էր էլեքտրականացած և լարված մի դրութիւն չափազանցված յոյսերով, այժմ հիասթափութիւն է նկատվում շատ տեղերում և հասարակութիւնը աւելի զննողական հայեացքով է վերաբերվում դէպի զանազան տեսակ ծրագիրները. բայց միևնոյն ժամանակ այդ հասարակութիւնը սպասում է, որ վերջապէս մտցվեն հիմնական բարենորոգութիւններ իրականութեան մէջ:

Բանն այն է, որ կեանքի թերութիւնները մնացել են նախկինները, նոր կեանք, նոր կուլտուրական բեղմնաւոր սկզբնաւորութիւններ չեն արված և իրականութիւնը իր պահանջներով բաւարարութիւն չէ ստացել:

Պետական Դուման, որ կոչված է ժողովրդական կարիքների և պահանջների արտայայտողը լինել և ժողովրդական ցաւերի հոգատարը, պարտաւոր է աւելի մեծ եռանդով և ուժեղ թափով ցոյց տալ վերանորոգչական գործունէութիւն, որպէսզի ժողովրդական խաւերում առաջ եկած պահանջները գտնեն օր առաջ իրանց բաւարարութիւնը և բեղմնաւոր հող պատրաստեն աւելի ընդարձակ շինարարական գործունէութեան համար պետական կեանքում:

Դէպի Պետական Դուման է դարձած ժողովրդի հայեացքները:

Ի՞նչ կը տայ նա այս նստաշրջանում:

Արդեօք կարող կը լինի՞ լուծել հերթական խնդիրները:

Ս. Քալանթար

ԿԱՅՍՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Րակոնիջի, 12 հոկտեմբերի

Երէկ առաւօտեան մինչև նախաճաշը Կայսրը և Թագաւորը միասին զբօսնեցին աւտոմոբիլով Րակոնիջիի շրջակայքում և այցելեցին հինաւուրց Պոլէնց դղեակը: Պաշտօնական հացկերոյթից յետոյ կայացաւ համերգ կոմպոզիտոր Մասկանիի մասնակցութեամբ: Երգում էին Ֆէստինելլա և Ֆարնէտի երգչուհիները և Գրասի ու Րուֆի արտիստները:

Քաղաքի շատ տեղերում երեկոյեան տեղի ունեցան համերգներ ռուսաց օրհներգով: Ամենուրեք տօնական տրամադրութիւն է տիրում:

Իտալական Թագաւորը իշխան Դոլգորուկիին շնորհեց իր լուսանկարը: Կայսրը բարոն Կորֆին շնորհեց շտալմէյստերի կոչում, Գալկեվիչին՝ կամերհերի: (Հ. Գ.)

Պարիզ, 12 հոկտեմբերի

Պիշօնը մեկնեց Մօդէն Կայսրին դիմաւորելու համար Իտալիայից վերադառնալու ժամանակ: (Հ. Գ.)

Րակոնիջի, 12 հոկտեմբերի

Կայսրը գեներալ Սասինարիին և Վոլատոիին շնորհեց Սպիտակ Արծւի շքանշանը: (Հ. Գ.)

Րակոնիջի, 12 հոկտեմբերի

Ժամը 10½-ին Իզվոլսկին, Ջիօլիտտին և Տիտտօնին դուրս եկան ամրոցից և ոտքով դիմեցին դէպի բատուշ, ուր նրանց դիմաւորեցին քաղաքագլուխը և գաւառական իշխանութիւնները: Նիստի դահլիճում Իզվոլսկին իտալերէն արտասանեց հետևեալ խօսքերը. «Ես բաղդաւոր եմ յայտնել, որ այն սրտագին ընդունելութիւնը, որ ցոյց տուեց Րակոնիջին Կայսրին, բարձր կը գնահատվի Ռուսաստանի կողմից: Ռուս ժողովուրդը դրանում կը տեսնէ նոր ապացոյց երկու երկիրների մերձեցման, որոնք այնքան համանման շահեր և նպատակներ ունեն»:

Քաղաքագլուխը ուրախութիւն յայտնեց ազգաբնակութեան կողմից Կայսրի այցելութեան առիթով:

Ապա Իզվոլսկին ընդունեց իտալացի ժուռնալիստներին: Վետտօրին իտալական մամուլի կողմից ողջունեց մինիստրին իբրև Իտալիայի բարեկամի և խնդրեց նրան Կայսրին հաղորդել իտալական մամուլի հպատակութեան զգացմունքները:

Իզվոլսկին շնորհակալութիւն յայտնեց և 20 րոպէի չափ խօսեց ժուռնալիստների հետ, յետոյ ընդունեց օտարազգի ժուռնալիստներին: (Հ. Գ.)

Րակոնիջի, 12 հոկտեմբերի

Կայսրի տեսակցութիւնը Թագաւորի հետ կրում էր ամենասրտագին բնաւորութիւն: Այդ բնաւորութիւնը երևում է երկու Միապետների բաժակաճառերից:

Իզվոլսկին և Տիտտօնին երկար խօսակցեցին հերթական քաղաքական հրատապ խնդիրների մասին, առանձնապէս կանգ առան Բալկանի հետ շաղկապված հարցերի վրա: Պէտք է նկատել, որ Ռուսաստանի և Իտալիայի մերձեցումը ոչ մի հոգ չէ կարող պատճառել և անկասկած կողջունվի բոլոր պետութիւններից իբրև խաղաղութիւնը պահպանելու լուրջ ֆակտոր: (Հ. Գ.)

Պարիզ, 12 հոկտեմբերի

Մամուլը շարունակում է գնահատել երկու Միապետների տեսակցութիւնը իբրև միանգամայն համապատասխան դէպք ռուս-ֆրանսիական միութեան շահերի: (Հ. Գ.)

Րակոնիջի, 12 հոկտեմբերի

Կայսրը 10,000 ֆրանկ յանձնեց քաղաքագլխին աղքատներին բաժանելու համար:

Բարձրագոյն կորտեժը հեռացաւ ամրոցից ժամը 2 և 40 րոպէին: Կայսրը և Թագուհին նստել էին à la domon կառքում: Յետոյ կառքերով գալիս էին Իզվոլսկին, Ջիօլիտտին, Տիտտօնին և միւս բարձրաստիճան պաշտօնեաները: (Հ. Գ.)

Րակոնիջի, 12 հոկտեմբերի

Հասարակութիւնը, որ ժողովվել էր ամրոցի մօտ, նաև ճանապարհի երկու կողմում, ողջունում էր Նոցին Մեծութիւններին «կեցցէ՛ Ռուսաստանը, կեցցէ՛ Իտալիան» աղաղակներով: Երաժշտախմբերը նուագում էին ռուսական օրհներգը: Կայարանում սպասում էին քաղաքագլուխը, կիրասիրների վաշտը: Կայսրը ընդունեց իշխանութիւնների մասս բարևի ողջոյնները, Թագաւորի հետ միասին անցաւ պատւաւոր պահակախմբի միջով, յետոյ Թագաւորի ուղեկցութեամբ մտաւ սալօն-վագօնը և մի քանի րոպէ վառ խօսակցութիւնից յետոյ սրտագին կերպով բաժանվեց Թագաւորից:

Ժամը 3-ին կայսերական գնացքը առաջ շարժվեց: (Հ. Գ.)

Րակոնիջի, 12 հոկտեմբերի

Երեկվայ ճաշի ժամանակ իտալական Թագաւորը արտասանեց ֆրանսերէն հետևեալ բաժակաճառը.

«Ուրախութեամբ ողջունում եմ Ձերդ Մեծութեանը իբրև Իտալիայի և իմ հիւրի, որովհետև Ձեր Մեծութեան գալուստը համապատասխանում է այն անկեղծ բարեկամութեան և հայեացքների ընդհանրութեան, որոնք կապում են մեր տները, մեր կառավարութիւնները, մեր երկիրները: Շահերի ընդհանրութիւնը և համակրանքի զգացմունքները, որոնք ևս առաւել կրկնապատկվեցին շնորհիւ ռուս նաւաստիների անձնուիրութեան և եռանդի վերջին դժբաղդութեան ժամանակ, նպաստում են աւելի և աւելի սերտ մերձեցման Ռուսաստանին և Իտալիային: Ռուս և իտալացի ժողովուրդները իմացան և գնահատեցին միմեանց: Մեր կառավարութիւնները արտայայտեցին այդ: Ջանալով միւս պետութիւնների հետ միասին խաղաղութիւնը պահպանելու, ես հաստատ համոզված եմ, որ կարող եմ աշխատել Ձեր Մեծութեան հետ, մեր ժողովուրդների բարիքի համար: Սրտանց շնորհակալ եմ Ձերդ Մեծութիւնից Ձեր այցելութեան համար. ցաւում եմ, որ Ձեզ հետ չէ Ձեր Օգոստափառ Ամուսինը, որին սրտանց ուզում եմ տեսնել: Բարձրացնում եմ բաժակս ի պատիւ Ձերդ Մեծութեան, ի փառս Ձեր Թագաւորութեան, Նոցին Կայսերական Մեծութիւններ Մարիա Ֆէօդորովնայի և Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի և ամբողջ Կայսերական Տան բարեկեցութեան համար, Ռուսաստանի հզօրութեան և բարօրութեան համար»:

Բաժակաճառից յետոյ երաժշտախումբը նուագեց ռուսական ազգային օրհներգը:

Կայսրը պատասխանեց հետևեալը.

«Ես անկեղծօրէն զգացված եմ այն սրտակցութեամբ, որով ձեր մեծութիւնը այս րոպէին Ինձ ողջունեց: Հասնելով ձեր գեղեցիկ երկիրը, Ես իրականացնում եմ Իմ սրտին թանգ ցանկութիւնը, որը Ես վաղուց փայփայում էի: Ես ափսոսում եմ միայն մի բանի մասին, որ Թագուհի Կայսրուհու առողջութիւնը չը թոյլատրեց նրան կատարել Ինձ հետ միասին այդ ճանապարհորդութիւնը և շնորհակալ լինել Ինձ հետ միասին ձեր մեծութիւնից այն այցելութեան համար, որ դուք արեցիք Մեզ Պետերհօֆում և որի մասին մենք պահում ենք ամենահաճելի յիշողութիւնը: Այդպիսի սրտագին ընդունելութիւնը, ցոյց տրված Ինձ Իտալիայում, համապատասխանում է այն անկեղծ բարեկամութեան և հայեացքների ու շահերի ընդհանրութեան, որոնք կապում են Մեր տները, Մեր կառավարութիւնները և Մեր երկիրները: Անկեղծ մասնակցութիւնը, որ ամբողջ Ռուսաստանը ընդունեց անցեալ տարի Իտալիային հասած դժբաղդութեան մէջ, և այն արձագանքը, որ այդ զգացումները տեղ գտան այստեղ Իտալիայում, հանդիսանում են պերճախօս ապացոյց աճեցուն համակրութիւնների Մեր երկու ազգերի միջև: Ես հաստատ համոզված եմ, որ Մեր կառավարութիւնները գործ կը դնեն բոլոր իրանց ջանքերը այդ համակրութիւնները ամրացնելու և շնորհիւ մշտական ու փոխադարձ վստահութեան վրա հիմնված աշխատակցութեան կը նպաստեն ոչ միայն Ռուսաստանի և Իտալիայի մերձեցման, որ այնքան համապատասխանում է երկու երկիրների փոխադարձ շահերին, այլ և ընդհանրական խաղաղութեան գործին: Ինձ առանձնապէս հաճելի է գտնվել այսօր (ձեզ հետ) ձեր մեծութիւնների ամուսնութեան տարեդարձին և Ես ամբողջ հոգով բարձրացնում եմ բաժակս ձեր մեծութեան առողջութեան, նոցին մեծութիւններ Հեղինէ Թագուհու և Մարգարիտ Թագուհու և ամբողջ արքայական տան առողջութեան համար: Խմում եմ այն գեղեցիկ երկրի մեծութեան և բարգաւաճման համար, որի հիւրասիրութիւնը Ես վայելում եմ այսօր»: (Հ. Գ.)

Վիէննա, 12 հոկտեմբերի

Քննելով Միապետների բաժակաճառերը, մամուլը նրանց համապատասխան է գտնում Իտալիայում տիրող տրամադրութեանը, որ արգելք եղաւ սօցիալիստների խելառ ցոյցերի իրագործմանը: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիւվենէպալէ, 12 հոկտեմբերի

Լարինչինը մեղաւոր ճանաչվեց նախամտածված սպանութեանը մասնակցելու մէջ, Կրասօվսկին՝ մասնակցելու դրդման մէջ, և դատապարտվեցին ուղղիչ տան մէջ 6 տարով բանտարկութեան և քաղաքացու կոչումից զրկման 10 տարով:

Դուբրօվինի վերաբերութեամբ գործը դադարեցվեց:

Հասարակական մեղադրող և վնասվող կողմերին իրաւունք տրվեց գործը վերսկսել, եթէ Դուբրօվինը Ֆինլանդիա կը գայ: (Հ. Գ.)

Ջուգդիդի 12 հոկտեմբերի

Պահակների շորեր հագած աւազակները գերեցին վաճառական Պիպիին: Նրանք հարկադրեցին ազգականներին նրա փրկանքի համար վճարել 500 րուբլի: (Հ. Գ.)

Կօպէնհագէն, 12 հոկտեմբերի

Թագաւորը արմատական կուսակցութեան պարագլուխ Ցալէն յանձնարարեց նոր կաբինէտ կազմել: (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Րաշտից գրում են «Кавк.»-ին հետևեալը. «Արդաբիլի շրջակայքում շահսէվանները եռանդով կողոպտում են ազգաբնակութեանը. Խալխալում նրանք հրդեհել են մի քանի գիւղեր: Ռուսական միսիայի պահանջով պարսից կառավարութիւնը ձեռնարկել է հեռագրական գիծ անցկացնելու Պարսկական Աստարայից մինչև Արդաբիլ: Արդաբիլը շրջապատած շահսէվանները մօտ օրերս արգելք եղան գծի յետագայ աշխատանքներին: Բանւորները հարկադրված էին աշխատանքները թողնել և վերադառնալ Աստարա: Եթէ արդարանան այն լուրերը, թէ Րահիմ-խանի ղարադաղցի ձիաւորները միացել են շահսէվանների հետ, տեղի կունենան նոր արիւնհեղութիւններ: Այստեղ մեծ հաւանութիւն են տալիս այն լուրերին, իբր Մօլլա-Ղուրբան-Ալիի կողմնակիցները միանալու են շահսէվանների հետ: Եթէ դա իսկապէս տեղի ունենայ, այն ժամանակ նոր կառավարութիւնը շատ դժուարութիւնով է կռիւ մղելու շահսէվանների, ղարադաղցիների և զէնջանցիների միացեալ ույժերի դէմ:

«Րաշտ քաղաքում գիշերները թերթիկներ են տարածում (շաբնամէ), որոնցով խիստ կերպով քննադատվում է տեղական սահմանադրական կազմակերպութիւնների գործիչներից մի քանիսի գործունէութիւնը. առաջ են բերվում նրանց յանցաւոր գործերը:

«Տեղական ինջումէն-նազմիէն (ոստիկանական կառավարութիւն) մի յայտարարութիւն է բաց թողել, որով ասում է, թէ Թուղթիկներ տարածողները բռնվելու դէպքում աքսորվելու են Պարսկաստանի սահմաններից: Երեք հոգի արդէն ձերբակալված են»:

«Т. Л.»-ի Րաշտի թղթակիցը գրում է հոկտ. 6-ից.

«Մօտ օրերս Րաշտից ոչ հեռու տեղի ունեցաւ միանգամայն աչքի «էկսպրօպրիացիայի» առաջին փորձը: Այդ նորաձևութեան զոհ դարձաւ եղբ. Թումանեանների առևտրական տան գրասենեակը: Գրասենեակը Էնզէլիի իր բաժանմունքին չարվադարների միջոցով ուղարկեց 3000 թուման արծաթ, որ կշռում էր մօտ 8½ պուդ: Կէս ճանապարհին կարավանին հասաւ մի կառք, որի մէջ նստել էին չորս երիտասարդներ, որոնք մաուզէրները ձեռքերին աղաղակում են «ձեռքերը վեր», փողի տոպրակները քաշում ձգում են իրանց կառքը և վերադառնում են յետ: Նոյն օրն ևեթ գտնվեց կառապանը, և երևաց, որ ռուսահպատակ թուրք է, և ներկայացվեց ռուսական հիւպատոսարանին, ուր դրվեց ոստիկանական հսկողութեան տակ: Մի քանի օրից յետոյ պարզվեց, որ «էսպրօպրիատորները» ևս ռուսահպատակ հայեր են եղել, որոնց մօտ գտնվել են 650 թուման:

«Տեղական ոստիկանական իշխանութիւնները «էքսպրօպրիատորների» հետ «խաղաղ բանակցութիւններ» են վարում մնացած փողերը վերադարձնելու մասին, որպէսզի ռուս իշխանութիւնների միջամտութիւնից կարելի լինի խուսափել:

Այս յանցագործութիւնը ուժեղ տպաւորութիւն թողեց առևտրական հաստատութիւնների և առհասարակ ամբողջ առևտրական աշխարհի վրա, քանի որ ամբողջ Պարսկաստանում փողերը գլխաւորապէս ուղարկվում են չարվադարների միջոցով:

«Հանգստութիւն չը կայ, և շատ աշխատանք պէտք է թափէ նոր կառավարութիւնը, որպէսզի հնար լինի վերականգնել կարգ ու կանոնը և ճնշել այն անիշխանութիւնը, որ առանձնապէս կորստաբեր ազդեցութիւն է անում երկրի առևտրա-արդիւնաբերական կեանքի վրա, և ազատել գիւղացիութեանը բռնութիւններից:

«Նոր կառավարութիւնը դեռ ևս չէ կարող կազմակերպվել: Ինտրիգները Թեհրանում կառավարիչ շրջաններում քայքայում են ամեն իշխանութիւն և այդ պատճառով էլ հասկանալի է, որ ոչ միայն գաւառում, այլ և Պարսկաստանի մայրաքաղաքներում և երկրի գլխաւոր կենտրոններում հաստատուն իշխանութիւն չը կայ: Օգտվելով դրանից, հակա-յեղափոխականները ատրճանաքար կողմնակիցներ են ձեռք բերում և բաւական աջող պրօպագանդա են մղում կառավարութեանը տապալելու մասին:

«Րաշտում վերջին օրերս քաղաքի զանազան մասերում, հասարակական տեղերում և մզկիթներում թուղթիկներ էին կպցրած «երեկոյեան ազդ» անունով: Այդ «շաբնամէ»-ներում կոնկրէտ օրինակներ են բերվում անարդարութեան և կողմնապահութեան՝ կառավարութեան և տեղական վարչական իշխանութիւնների վերաբերութեամբ: Թուղթիկները առանձնապէս ընդգծում են խօսքի ազատութիւնը ամեն կողմից սահմանափակելու վրա: «Սկզբում միապետութեան ժամանակ,—ասված է շաբնամէում,—կարելի էր ազատօրէն քննադատել իշխանութիւնների և կաշառակերների գործողութիւնները, իսկ այժմ, զինված ֆէդայիների—ղեկավարների կողմնակիցների երկիւղից ժողովուրդը հնարաւորութիւն չունի ազատ կերպով իր համոզմունքները և նկատողութիւնները յայտնելու: Այս ինչ տեսակ սահմանադրական ազատութիւն է»:

«Իշխանութիւնները ձերբակալեցին 2 երիտասարդների, մեղադրելով այդ Թուռցիկները տարածելու մէջ։ Միւս օրը վերստին երեւաց շարնամէ, ուր հեգնում են ոստիկանութեան կարգադրութիւնը և նախազգուշացնում են, որ այդ միջոցներով ժողովրդին չեն կարող ստիպել լռել և որ խիստ քննադատութիւնը իշխանութիւնների և ղեկավարների անարդարացի գործողութիւնների մասին՝ դեռ առջեւումն է։

«Նախագծվում է կազմակերպել կովկասցիներից և երիտասարդ պարսիկներից «կարմիր հարիւրեակային գվարդիա» սահմանադրութիւնը պաշտպանելու համար»։

—

«Т. Л.»-ի Թէհրանի Թղթակիցը գրում է նոյտ. 11-ից.

«Վերջին օրերս Պարսկաստանի մայրաքաղաքում բոլորովին անսպասելի կերպով պայթեց կանանց շարժում, որն այն աստիճան ընդգրկեց Թէհրանի ազգաբնակութեան բոլոր խաւերը, որ հնարաւոր է ընդհանուր ապստամբութիւն սպասել կառավարութեան դէմ։

«Շարժումը արգասիք է «Իրան» լրագրի մերկացումների, որը վերջերս էլ կողմնակի կերպով տեղեկութիւն տուեց «կենդանի ապրանքի» առեւտրի մասին Թէհրանում։

«Այս օրերս այդ լրագիրը այդ հարցի առիթով հանդէս եկաւ ոչ նկատողութիւններով, այլ փաստերի հիման վրա, որոնցով մերկացումներ է անում մինիստր Ալա-էս-Սալթանէի ձեռքով կատարվող կանանց առեւտուրը մինիստրի հաւատարմատարների միջոցով։

«Յիշեալ հաւատարմատարներից մինի անփութեան պատճառով զոհերից մինը այս օրերս կարողացաւ փախչել հարեմից և խմբի զազիր արհեստը դարձաւ մայրաքաղաքի սեփականութիւն։ Ալա-էս-Սալթանէի գործակալը ձերբակալվեց։ Նա հազիւ կարողացաւ ազատվել ժողովրդի կատաղի պատժից։

«Ազգաբնակութիւնը կատաղած է վերին աստիճանի։ Կանանց մէջ տիրում է յեղափոխական տրամադրութիւն։ Կանանց հաւասարութեան և առհասարակ էմանսիպացիայի պահանջը ընդունում է սպառնական բնաւորութիւն։

«Կառավարութեան անդամները ճնշված են այդ մերկացումներից, լիակատար լռութիւն են պահպանում, բայց անհրաժեշտ համարեցին միջոցներ ձեռք առնել Ալա-էս-Սալթանէին ժողովրդական վրէժխնդրութիւնից պաշտպանելու։

«Հոգեւորականութիւնը շատ լաւ կարողացաւ օգտվել այդ շարժումից և արշաւանքը ուղղեց այժմեան կառավարութեան անդամների դէմ, անուանելով նրանց «իշխանութեան յափշտակիչներ»։

«Հոգեւորականութիւնը դաշն կապելով տեղական միապետականների հետ բացարձակ յայտնում է, որ ժողովուրդը չէ ճանաչում «իշխանութիւնը յափշտակողներին» իբրև կառավարութիւն, այլ նրանց համարում է յեղափոխականներ։

«Հոգեւորականութեան պրօպագանդան միապետների օգնութեամբ արդէն մեծ չափերի է հասել Ղազվինում և Րաշտում, ուր ազգաբնակութեանը յորդորում են դադարել վճարելուց հողային տուրքերը Սիփէհդարին, որը այդ գաւառներում ահագին անշարժ կայքերի տէր է։ Առհասարակ այժմեան րէժիմից դժգոհների կուսակցութիւնը, իշխանութեան լիակատար Թուլութեան պատճառով, աստիճանաբար ուժեղանում է և սպառնում է երկիրը նոր դըժբաղդութեան դուռը հասցնել»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

—

Մատթէոս ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Յորէ ամբառնալոյ Մեր ի գահ հայրապետական նկատեմք, զի ժողովրդականք մեր ազգի ազգի բազմաթիւ խնդրովք դիմեն առ Մեզ և դարման հայցեն այնոցունց, է որ վասն Թոյլտուութեան պսակաց, է որ վասն ամուսնալուծութեանց, շնորհման վերստին իրաւանց ամուսնութեան, յորմէ զրկեալ են լուծմամբ պսակացն, ձեռնադրութեան ընծայացուաց ի քահանայս, բողոքոց զհոգեւորականաց և այլոց բազմազան առարկայից և խնդրոց։ Եւ վասն ստուգութեան հանգամանաց խնդրոցդ առ տեղեաւն՝ հարկեալ գտանիմք վերադարձուցանել ըզխնդիրս առ Թեմական առաջնորդս կամ ի կօնսիստորիայս առ ի վերստին մատուցանել զայնոսիկ Մեզ հանդերձ քաղեալ տեղեկութեամբք և եզրակացութեամբ իւրեանց։ Վասն որոյ ի հանդէս գան վարկպարազի գրագրութիւնք ընդ երկար ի ձգաս շուտափոյթ կատարման խնդրոց և ժամավաճառումն պաշտօնէից և հաստատութեանց մերոց։

Արդ՝ առ ի զառաջս առնուլ այսօրինակ անպատեհութեանց և անտեղի գրագրութեանց, այսու կոնդակաւ Մերով պատուիրեմք գերաշնորհութեան ձերում առնել շըրջաբերական կարգադրութիւն և ի ձեռն ստորադրեալ ձեզ հոգեւոր պաշտօնէից, հաստատութեանց և համօրէն քահանայից ծանուցանել համայն մերազնեայ ժողովրդեան Թեմիդ, եթէ խնդրատուք պարտին դիմել առ Մեզ ի ձեռն մերձաւոր հոգեւոր հաստատութեանց և պաշտօնէից կամ առաջնորդին, զի հնարաւոր լիցի նոցա զխնդիրսն ժողովեալ կարեւոր տեղեկութեամբք և եզրակացութեամբ իւրեանց մատուցանել Մեզ ի վախճանական տնօրէնութիւն։

Մատթէոս Բ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
5 նոյտ. 1909 ամի
Ի ս. Էջմիածին

ՆԱՀԱՆԳ. ՅԱՏՈՒԿ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԵՐԸ ԶԵՄՍՏՎՕ ՄՏՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

—

Խորհրդակցութեան հինգերորդ նիստի սկզբին լսվեց իշխան Գուրամօվի պատճառաբանված առաջարկութիւնը՝ Թեթեւացնելու ազգաբնակչութեան բեռը և զեմստվային գանձարանի ծախսը՝ զեմսկիյ ստրաժայի (գիւղական պահակ) պահպանութեան գործում։ Այժմեան զեմսկիյ տուրքից՝ մօտ 6 միլիօն՝ այդ պահակը ծախս է պահանջում մօտ 2,800,000 րուբլի։ Մինչդեռ ներքին նահանգներում ազգաբնակչութիւնը պահակի վրա ծախսում է անհամեմատ քիչ, վճարելով ծախսի միայն մի մասը՝ բնակարանի, փուրաժի և այլն։ Լսվում են ձայներ, թէ նման խնդիրք յարուցանել՝ կը նշանակէ խնդրել, որ մեր պահպանութեան համար վճարէ ռուս մուժիկը. բայց դա սխալ է, քանի որ ստրաժայի նշանակութիւնը բղխում է ոչ միայն տեղական կարիքներից, այլ և ընդհանուր պետական։ Այդպէս լինելով միանգամայն արդարացի կը լինի, որ պետական գանձարանը վերցնէ իր վրա ծախսի այն չափը, ինչ-որ ներքին նահանգներում։

Խորհրդակցութիւնը ընդունում է այս ձեւակերպը. խնդրամատոյց լինել ուր հարկն է, որ տեղական ազգաբնակութիւնը զեմսկիյ ստրաժայի պահպանութեան գործում կրէ նոյն ծախսերը, ինչ որ ներքին նահանգները։ Այդ հաշւով կը զանձվի աւելի քան $1^{1}/_{2}$ միլիօն րուբլի։

Ապա Ա. Քալանթարը զեկուցեց նախապատրաստական յանձնաժողովի կարծիքը, թէ արդեօք ինչ տեսակ ցենզ պիտի սահմանել ինքնավարութեան մասնակցելու համար։ Հերքելով կայքային ցենզի սկզբունքը, որ անշուշտ պիտի սահմանափակէ ընտրողների քանակը, զեկուցողը առաջարկեց կանգ առնել հարկային ցենզի վրա։ Ընտրութիւններին մասնակցում են ամենքը, որոնք վճարում են որեւէ զեմսկիյ հարկ։ Բայց ի նկատի առնելով մեր երկրի կուլտուրական ցած մակերեւոյթը, ցանկալի է, որ մենք կարողանայինք գործին գրաւել և ցենզ չունեցող, բայց կրթված մարդկանց։ Դրա համար առաջարկվում է կրթական ցենզ. ինքնավարութեան ընտրութիւններին մասնակցում են նաև միջին կամ համապատասխան մասնագիտական կրթութեան անձինք։ Այս առաջարկին բժ. Ա. Խատիսեանը աւելացնում է հետեւեալ լրացումը, որ օրէնքը Թոյլատրում է տեղական ինքնավարութեանը մասնակցել և ցենզ ունեցող կանանց (ներկայ օրէնքով ցենզաւոր կանայք ընտրութիւններին մասնակցում են հաւատարմատարների միջոցով)։ Խորհրդակցութիւնը ցենզի հարցը ձեւակերպում է այսպէս. ընտրութիւններին մասնակցում են այն անձինք, որոնք որեւէ զեմսկիյ հարկ են վճարում, կամ ունեն անշարժ կայք, Թէկուզ ազատված զեմսկիյ հարկից։ Կանայք կարող են մասնակցել անձամբ, եթէ կամենան։

Ինչ վերաբերում է ընտրողական ժողովների կազմելու հարցին, խորհրդակցութիւնը ընդունեց, որ մանր զեմստվային մասնիկներում բոլոր ընտրողները կազմում են մի ընտրողական ժողով, իսկ գաւառական ընտրողական ժողովները կազմվում են երկու կուրիաներից. մէկը՝ գիւղատնտեսական աշխատանքով պարապողների (գիւղացիք, հողատէրեր՝ ազնուական և մասնաւոր անձինք) և միւսը՝ վաճառականական-արդիւնաբերական (քաղաքի բնակիչներ և գաւառում առեւտրով ու արդիւնագործութեամբ զբաղվածներ)։

Նոյն օրվայ երեկոյեան նիստում լսվեց իշխ. Ա. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը՝ գաւառական և նահանգական զեմստվօների ժողովների ձայնաւորների Թւի մասին։ Խորհրդակցութիւնը ընդունում է նախապատրաստ. յանձնաժողովի առաջարկը, այն է, որ գաւառական զեմստվային ժողովներում սահմանվում է ամենաքիչը 35 անդամ։ Իսկ եթէ գաւառի ազգաբնակութեան Թիւը 100,000-ից աւել է, այդ դէպքում ամեն մի աւել 10,000 հոգուն աւելացվում է մի ձայնաւոր, սակայն դրանց ընդհանուր Թիւը չը պիտի անցնէ 60-ից։ Ինչ վերաբերում է այն բանին, Թէ ամեն մի ընտրողական կուրիա քանի ձայնաւոր պիտի ընտրէ այս Թւից, խորհրդակցութիւնը վճռեց, որ կուրիաները (գիւղական և վաճառականական-արդիւնաբերական) ձայնաւորներ ընտրում են համապատասխան իրանց տուած զեմսկիյ հարկի ընդհանուր քանակին, սակայն այն պայմանով, որ քաղաքային կուրիան չունենայ բոլոր ձայնաւորների $^{1}/_{6}$-ից աւել ձայն։ Օրինակ Թիֆլիսը, որ մտնում է գաւառական զեմստվօյի կազմի մէջ, ընտրելու է ոչ աւել քան $^{1}/_{6}$-ը բոլոր ձայնաւորների, Թէև նրա տուած զեմսկի հարկը 3 անգամ աւել լինի՝ գիւղական կուրիայի տուածից։

Ինչ վերաբերում է նահանգ. զեմստվօյի ժողովների կազմին, խորհրդակցութիւնը որոշեց, որ ձայնաւորների Թիւը չանցնէ 75-ից. ամեն գաւառական զեմստվօ ձայնաւորներ է ուղարկում իր ազգաբնակութեան համաչափ, սակայն ամենափոքր գաւառը պիտի ունենայ առնուազն 3 ձայնաւոր, ամենաբնակվածը՝ 8-ից ոչ աւել։

—

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեանը նահանգական զեմստվային խորհրդակցութեան նոյեմբերի 10-ի նիստում արտասանեց հետեւեալ ճառը, որ հարկաւոր ենք համարում առաջ բերել.

«Բանաձեւելով այն բոլոր առարկութիւնները, որ արվեցին երկօրեայ վիճաբանութիւններով զեմստվային մանր միութեան դէմ, ես կը բաժանեմ նրանց երեք խմբերի. —ազգաբնակութեան ֆինանսական անպատրաստման պատճառաբանութիւններ, հաւատի բացակայութեան ենթադրութիւններ ժողովրդի ինքնակառավարման ստեղծագործութեանը, ույժին և կարողութեանը, մեր խորհրդակցութեան մի մասի անպայման ցանկութիւնը՝ ստեղծելու կուլտուրական խնամակալութիւն ժողովրդի վրա։

«Այդ պատճառաբանութիւնները նոր չեն. կարդալով ռուսական զեմստվային վարչութիւնների զեկուցումները և որոշումները, դուք կը գտնէք նրանց իրանց դարն անցրած կամ պահպանողական գործիչների շուրթերում։

«Ռուսական զեմստվօների և գիւղատնտեսական կարիքների կոմիտէների մեծ մասը արտայայտվեց յօգուտ մանր զեմստվային միութեան։ Ձեր պատճառաբանութիւններից և ոչ մինին ես չեմ հաւատում. նրանց ջարդում է կեանքը, հերքում է տրամաբանութիւնը։

«Գիւղացիներն այս րոպէիս ձեզ ասացին, որ նրանք ներկայումս ամեն բանից զըրկված են, և որ նրանք փոքր բիւջէով, որ անկասկած աճելու է հետզհետէ, կարող են բաւարարութիւն տալ իրանց հերթական, կենսական կարիքներին՝ դըպրոցական, ճանապարհների, հիւանդանոցային և մելիօրատիվ գործում։ Նրանք ձեզ ցոյց տուին իրանց օրինակելի բիւջէն։ Նրանք ձեզանից լաւ գիտեն, Թէ ինչպէս պէտք է ժողովեն և գործադրեն իրանց արիւն քրտինքի փողերը։

«Դուք ասում էք, որ ռուսական զէմստվօն արդէն քառասնամեայ փորձառութիւն ունի և նրա ազգաբնակութիւնը պատրաստված է իրագործելու զէմստվային մանր միութիւնը։ Պարոններ, ես դրականապէս այն միտքն եմ յայտնում, Թէ մեր ժողովուրդը—Կովկասի ժողովուրդները — ռուս ժողովրդից ոչ պակաս պատրաստ է իրագործելու բարենորոգումները։ Ես 1909 Թւին կրկնում եմ այն, ինչ որ ասել եմ 1905 Թւին։ Պէտք է ունենալ այդ արիութիւնը, և ես ձեզ հրաւիրում եմ յիշել Կովկասի Փոխարքայի նախկին օգնական Սուլթան Կրիմ-Գիրէյի ճանապարհորդութիւնը Վըրաստան. ինչ տեսաւ նա այնտեղ. հանգիստ, իր ընտանեկան գործերում ինքնավար մի ժողովուրդ։

(Նախագահ նահանգապետ Լօզինա-Լօզինսկին խնդրում է խօսել Թիֆլիսի նահանգի ազգաբնակութեան մասին)։

«Ես հնազանդվում եմ և ընդգծում, որ Թիֆլիսի նահանգի սահմաններում ապրում է Քութայիսի նահանգի ազգաբնակութեան նման ժողովուրդ։ Մեր ժողովուրդը կարդում է լրագիրներ կենտրոնական նահանգների ազգաբնակութիւնից ոչ պակաս։ Նա սիրում է դպրոցներ։ Հայ գիւղացիները յօժարակամ բանում են դպրոցներ։ Մեր ժողովուրդը գործնականում ծանօթ է ընտրողական իրաւունքի հետ։ Նա հազարամեայ կռիւ է մղել իր գոյութեան համար և մեզ ձեզ հետ պահեց իր ապագայի համար...։ Եւ դուք նրան անպատրաստ էք համարում զէմստվային մանր միութեան համար. վախեցէք Աստուծուց. ես հաւատում եմ ժողովրդին և խղճում եմ ձեզ, որ կորցրել էք ձեր հաւատն առ ազգաբնակութիւնը...

«Գիլզադվան կշտամբեց ժողովրդին նրա համար, որ նա քաղցում էր և փոխատուութիւններ էր խնդրում։ Իսկ կալուածատէրերը չէին վերցնում փոխատուութիւններ։ Իսկ Բագուի նաւթարդիւնաբերողները չէին ստանում փոխատուութիւններ։ Իսկ ինչու դուք նրանց չը զրկեցիք ինքնավարութիւնից։ Իշխաններ Ջօրջաձէն և Ջանդիէրին կշտամբեցին ժողովրդի մարդկանց՝ գողութեան մէջ։ Իսկ ինչ ասաց սենատոր Գարինի քննութիւնը։ Չէ՞ին գողանում ինտենդանտները, բարձրագոյն կրթութեան տէր անձինք։ Անգրագէտին ես դիւրութեամբ կը ներեմ, քան կրթվածին...

«Անցնում եմ երրորդ կարգի առարկութիւններին. դուք կամենում էք օգնել ժողովրդին։ Ուրեմն գնացէք նրա մօտ։ Ծառայութեան մտէք մանր զեմստվային միութեան մէջ։ Եթէ դուք հարկաւոր էք, ժողովուրդն ինքը կը կանչէ ձեզ, սակայն մի մարէք գաղափարները, մի հրէք ժողովուրդը յետ, մի ստիպէք նրան զեմստվային գործի համար տասնեակ վերստեր անցնել ձեզ մօտ գալու։

«Ես վերջացրի։ Սեղմեցէք ձեր պատճառաբանութիւնները, պարփակելով ամբողջ հարցը մի բանաձեւի մէջ՝ ժողովուրդը դուրս հանեց մեզ իր ուսերի վրա. այժմ մի խանգարէք նրան դուրս բերել ինքն իրան դէպի առաջ»։

ԽՈԼԵՐԱՆ ԲԱԳՈՒՈՒՄ

—

11 նոյեմբերի

Խոլերան արդէն բոյն է դրել մեզ մօտ և քանի գնում ամրացնում է իր հիմքերը։

Օր չէ անցնում, որ մի քանի մարդ չը հիւանդանայ, որոնցից սակայն, բարեբաղդաբար, մեծամասնութիւնը առողջանում է։

Եւ տարօրինակ բան. չը նայած որ մեզ մօտ նա դեռևս շատ Թոյլ է, բայց ուղղակի ընդգրկել է ամբողջ քաղաքը և հիւանդացողները ոչ Թէ մի փողոցում կամ Թաղում ապրող անձնաւորութիւններ են լինում, այլ զանազան Թաղերում ապրողներ, և կարելի է հաստատապէս ասել, որ չը կայ մի Թաղ, որտեղ հիւանդացողներ չը լինեն։

Վերջերս էլ երեւան է եկել այսպէս անւանվող «МОЛНІЯНОСНАЯ» խոլերան, որը րոպէապէս սպանում է մարդուն և հիւանդին փրկելու այլեւս ոչ մի հնար չէ լինում։

Անցեալ օրը խոլերայի այդ տեսակով հիւանդացաւ և մեռաւ ինժեներ Յակոբեանը։ Հանգուցեալը երեկոյեան ժողովարանումն էր, բոլորովին առողջ, որտեղից գնում է տուն, ընթրում և պառկում քնելու։ Կէս ժամից յետոյ հիւանդանում է և մինչև բժիշկ հասնելը մեռնում։ Թէ որտեղ էր վա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆՈ՞ՒՄ Է ԹԻՒՐՔԻԱՆ

IV*)

Ես աշխատեցի ընդհանուր և հակիրճ գծերով նկարագրել ներքին և արտաքին քաղաքականութեան և տնտեսական այն կացութիւնը, որի մէջ Թիւրքիան մտաւ պետական նոր կեանքի շեմքով։ Այժմ պիտի ասել, Թէ ինչպէս է նա անցկացնում օրերը։

Կրկնում եմ. Թիւրքիայի պետական կեանքի մէջ չը կան որոշ, նոր ձեւեր։ Նորը միայն նա է, որ այլեւս չը կայ հին րէժիմը։ Եւ պետական կեանքի այդ անորոշութիւնը աղօտ յոյսերով Թեւաւորել է Թիւրքիայի ազգաբնակութեան ամենազանազան տարրերը։ Սահմանադրութեան հրատարակվելու առաջին օրերը երկիրը հրճւում էր. լինում էին միտինգներ, տօնակատարութիւններ, Թափօրներ, հրավառութիւններ, Թիւրքերի և քրիստոնեաների փոխադարձ համբոյրներ։ Ինչպէս լաւ անձրեւներից յետոյ բուսնում են սունկեր, երեւացին անթիւ լրագիրներ, երգիծաբանական Թերթեր, բրօշիւրներ, Թերթիկներ։ Մարդիկ արբած էին այն հնարաւորութիւնից, որ կարող են ասել, գրել ցանկացածը. այնքան երկարատեւ և դժուարին էր լռութիւնը։ Երեւաց սուլթանի պատկերը նոյն իսկ բաց նամակների վրա, որ առաջ խստիւ արգելված էր շարիաթով։ Յանկարծ մի քանի տեղերում երեւացին հեռախօսներ, իսկ մինչև այդ՝ հեռախօսը պետական դաւաճանների Թւում էր և երկիր չէր Թողնվում։ Սրճարանները աշխուժացին. առաջ այստեղ լռակեաց էին նստում, երկիւղալի էր խօսակցել. մի զուգէ մատնեն։ Շատ ղաֆէների, լոկանդների և հիւրանոցների ճակատներում երեւաց liberté (ազատութիւն) խօսքը։ Ամբողջ երկրում լսվում էր «հուրրիէտ» (ազատութիւն) բառը։ Սկզբում նա Թեթև, քաղցրահնչիւն և ախորժելի էր. յետոյ սկսեց Թանձրանալ, ընդգրկել ինչ-որ նոր տրամադրութեան նշան, նոր զգացմունքներ։

Ազգաբնակութիւնը պահանջում է փոխել կայմականին, վալիին։ Հեռանալով պաշտօնից՝ վերջիններս կատաղած շշնջում են. «Սա էլ ազատութիւն է, էլի»։ Մուրացկանը այսօր քիչ ողորմութիւն է ժողովել. նա գրգռված ասում է ընկերին. «Հուրրիէտ է, էլի»։ Ջինւորներին ռոճիկ չեն տալիս, բաժանել են փտած հագուստ, կերակրում են նեխված ալիւրով։ Նրանք բարձր աղաղակում են, բռունցքները շարժելով. «Ահա հուրրիէթը»։ Գիւղականը չէ ուզում հարկ վճարել, իշխանաւորը բացագանչում է. «Ահա ձեզ և հուրրիէտ»։ Մուսուլմանները ըստ հին սովորութեան արգելում են քրիստոնեաներին զանգակներ հնչեցնել, սպառնում են. քրիստոնեաները կատաղած, բայց ահով լցված կամաց ասում են. «Հուրրիէ՛տ»։

Լայն, ազատ տարածութեանը պիտի ընտելանալ նոյնպէս, ինչպէս և բանտի նեղ պատերին։ Յատակի վրա ամեն մի զգաստ մարդ կարող է քայլել մի տախտակի վրայով, առանց միւսներին դիպչելու։ Բայց դրէք այդ միակ տախտակը մի բարձրութեան վրա և վրան էլ կանգնեցրէք նոյն մարդուն, նրա ձեռքերը և ոտքերը կը դողդողան, երեսը կը գունատվի, և նա չի կարողանայ նոյն տախտակի վրայով մի երկու քայլ անել։ Բժիշկները այս երեւոյթը բացատրում են այսպէս. հողի վրա ման գալուց մենք սովոր ենք զգալ և տեսնել մեր երկու կողմին յայտնի տարածութեան վրա յենվելու ամուր կէտեր։ Բարձրութեան վրա այդ հոգեբանական նեցուկը բացակայում է։ Եւ մարդուս պաշարում է ծանր, անյաղթ վախը՝ արձակ տարածութիւնից։

Գրեթէ նոյնանման վախ է պաշարում, երբ մարդիկ իրաւական-քաղաքական մի ձեւից միւսին են անցնում, երբ վերջինս տալիս է աւելի ազատութիւն։ Ամենքը երեւի յիշում են, Թէ ինչ տագնապալից ըսպասողութեան մէջ էին մեր քաղաքները յիշատակելի հոկտեմբերեան օրերին։ Վախենում էին ինչ-որ անորոշ բանից և այդ անորոշը Թւում էր աննկարագրելի, ահալի։

Նոյնը պատահեց և տեղի է ունենում այժմ Թիւրքիայում։ Միմիայն այստեղ միմեանցից վախենում են ոչ դասակարգերը, այլ այլակրօն, այլազգի խմբերը։

Ի հարկէ Թիւրքիայի բանտի նեղ պատերն ամենքին էլ ճնշում էին։ Բայց դրան նրանք սովորել էին։ Սովոր էին յայտնի տարածութեան վրա տեսնել անխուսափելի իշխանութիւն, զօրքը, ոստիկանին։ Անգամ ընտելացել էին, որ իշխանաւորը ծիծաղէ իրանց վրա, բանտ նստեցնէ, կեղեքէ, կաշառք ուտէ։ Տրտնջում էին, գանգատվում, անիծում, բայց ապրում առանց ահի և սպասման. սովորել էին. դա կեանքի կանոնն էր։

Յուլիսի յեղափոխութիւնից յետոյ հին րէժիմը փլվեց։ Չը կայ այլ ևս իշխանութիւնը, որից վախենում էին. չը կայ զօրք, ոստիկան։ Գաւառներում, նամանաւանդ ասիական, իշխանութիւնը ձեռքերը ծալել էր, ես առաւել, որ բոլոր զօրքերը քշել էին Բօլգարիայի և Արաբիայի սահմանները։

Կ. Պօլսի շուրջն ամենքն ապրում էին, օրէ-օր սպասելով աղէտի՝ եւրոպական պատերազմի, ներքին խռովութեան։ Եւ գաւառներում ամենքը վախեցան. «Աստուծոյ սիրուն համար ուղարկեցէք մեզ զօրք և ոստիկաններ»։ Ի զուր էր Դամասկոսի վալին օգնութիւն խնդրում, քանի որ Դամասկոսին մօտ են դրուզները, որոնք կարող են ապստամբվել ամեն ժամ։ Եւս առաւել, որ այստեղ Թափանցել է անգլիական ազդեցութիւնը։ Ամբողջ Սիրիան, Պալէստինը, Փոքր-Ասիան ապրում էին վաղվայ օրին սպասելով։ Ինչ-որ բան է պատահելու։ Ամենքին Թւում էր, որ պիտի լինի ինչ-որ մեծ աղէտ, պօգրօմ, ներքին կռիւ։ Կասէք, Թէ այդ սպասումը արդարացի էր. ահա Թէ ինչ պօգրօմներ եղան Կիլիկիայում։ Այո, դա ճիշդ է, բայց բոլորին յայտնի, որ Թիւրքիայում (մենակ այնտե՞ղ) պօգրօմները պատահեցին ոչ այն պատճառով, որ իշխանութիւնը անգործ էր, չը կար զօրք, ոստիկանութիւն, այլ հէնց այն պատճառով, որ իշխանութիւնը «գործում էր», իսկ զինւորները և ոստիկանները «ներկայ» էին։ Խօրուանում անհանգիստ է. դրուզները նեղում են քրիստոնեաներին։ Նոյնը և առաջ էր, բայց այժմ ամեն ինչ աւելի ահալի է դարձել։ Դամասկոսի ռուս հիւպատոս իշխ. Շախօվսկօյի պնդումին համաձայն՝ վալին քաղաք հրաւիրեց դրուզների շէյխ Եահիա Ատրաշին, որ սրա միջոցով ազդէ դրուզների վրա։ Շէյխը շատ խելօք, բայց ապականված մէկն է, Թէև նրա հետ կարելի է որեւէ համաձայնութեան գալ։ Նա գալիս է ռուս հիւպատոսի մօտ և ասում. «Թողէք մի կողմ Թիւրք կառավարութիւնը։ Համաձայնութեան գանք առանց նրան դիմելու։ Ես ձեր տրամադրութեան տակ եմ։ Մի քանի մեռնողներ մահից առաջ ունենում են պայծառ օրեր։ Ահա այդպիսի պայծառ օրերում է ապրում Թիւրքիան. Թողնենք, որ նա մեռնի։ Ասէք, ինչ է ձեր խնդրածը, ես էլ կասեմ իմ ցանկացածը»։

Կեանքը Թիւրքիայի քաղաքներում շատ է փոխվել։ Տեսել եմ Թիւրքիան վեց տարի սրանից առաջ, տեսայ և այժմ։ Ահագին զանազանութիւն։ Ամբողջ երկիրը Թւում է ինձ իբրև մի վիթխարի կաթսայ, որի մէջ եռում է Թունդ ժողովրդական գինի, եռում է, փռփռում և բարձրանում մինչև ծայրերը։ Օրինակ՝ Դամասկոսը առաջ հաւերի հետ էր քնում. հսկում էին միայն պահապանները։ Այժմ կէս գիշերին Դամասկոսը դեռ քնած չէ. դարպասների մօտ մարդկանց խմբեր, որոնք խօսակցութիւնը դեռ նոր են վերջացրել։ Մարդիկ անցնում են հրապարակներով և խօսում գործի մասին, կարծես նրանց ամբողջ կեանքը գիշերները հէնց լուրջ խօսակցելն է։ Տեսել եմ գիշերները ժողովներ մզկիթներում և տներում։ Բոլորը նստոտած են։ Նստած խօսում են և հռետորները։ Իսկ քրիստոնեաները վախկոտ կասկածանքի մէջ են. «ինչի՞ մասին են խօսակցում մահմեդականները»։ Անշուշտ չար մըտքեր են տածում։ Ո՞րտեղ է ապա իշխանութիւնը և զօրքը։ Իսկ եթէ վերականգնվի հին իշխանութիւնը, հին ոստիկանութիւնը, ինչ աղմուկ և կոչ կը բարձրացնեն ամբողջ Թիւրքիայում։ Ասում են «Աստուած իմ» ոչ այն պատճառով, որ նրան հաւատում են, այլ լոկ սովորութիւնով։

Ի հարկէ, միայն քրիստոնեաները չը վախեցան սահմանադրութեան ազատ տարածութիւնից։ Ահ կայ և մուսուլմանների մէջ։ Նրանց շէյխերը մզկիթներում տաք քարոզում են հուրրիէտի դէմ։ Ազատութիւնը ոչնչացնում է հաւատը դէպի Ալլահը, Թուլացնում ընտանեկան կապերը, քարուքանդ անում դարերով կազմված հասարակական յարաբերութիւնները։ Հուրրիէտը ինքը չարիքն է. երիտասարդ-Թիւրքերը՝ հայրենիքի Թշնամիները։

Եւ անշարժացած ճահճի յատակից բարձրանում է, ռուսներիս էլ լաւ ծանօթ, բազմադարեան տգիտութեան, վայրենի ֆանատիկոսութեան մրուրը։ Աճում է բաց տարածութեան վախը։

Բայց ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Թիւրքական ժողովուրդները մնում ըակվել նա, մինչև այժմ չէ աջողվել իմանալ։

---

*) Տես «Մշակ» № 223.

Եւ չը նայած որ այդ սոսկալի ախտը արդէն ամուր կերպով բոյն է դրել մեզ մօտ, սակայն մեր քաղաքի հայրերը մինչև այժմ համարեա թէ ոչ մի միջոց չեն ձեռք առել նրա առաջն առնելու։

Քաղաքը իր նախկին կեղտոտ դրութեան մէջ է. փողոցներն ու բակերը առաջվայ պէս զարշահոտ, իսկ մեր սանիտարական կօմիսիան՝ լեթարգիական քնի մէջ...

Երջանիկ քաղաք։

Վ. Դիմաքսեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 12 հոկտեմբերի

Դումայի երկրորդ նիստը բացված է ժամը 11 և 20 րոպէին։ Նախագահում է իշխ. Վօլկօնսկին։

Կոմս Կապնիստը զեկուցանում է հողային բարեկարգութեան կանօնադրութեան նախագծի մասին։

Զեկուցագրի մէջ մատնանշվում է, որ Ռուսաստանում հողատիրութեան ընդլայնումը անհնարին է դարձել. անհրաժեշտ է կանօնաւորել հողերից օգտվելը, բարձրացնել հողի կուլտուրան, որին և ձգտում է ներկայ օրինագիծը։ Ամեն տեսակ առաջադիմութեան չար թշնամի գիւղատնտեսութեան մէջ հանդիսանում է հողերի մէջ առ մէջ ընկած դրութիւնը (черезполосица), որ Ռուսաստանում հասել է ահագին չափերի, ինչպէս համայնական, այնպէս և ծխի տիրապետութեան մէջ։ Գիւղացիական հողատիրութեան կարևոր պակասութիւն ապա հանդիսանում են վարելահողերի հեռաւորութիւնը բնակութեան տեղից և դաշտերի հեռաւորութիւնը մինը միւսից։ Այդ և ուրիշ պակասութիւնների ոչնչացումը կազմում է օրինագծի նպատակը։ Նախագիծը մեծ նշանակութիւն է տալիս ժողովրդի ձեռներեցութեանը, թէ հողերի մէջ առ մէջ ընկած դրութիւնը ոչնչացնելու և թէ այնպիսի նիւթական և իրաւական պայմաններ ստեղծելու գործում, որոնք անհրաժեշտ են ինքնին հողային կազմը շուտափոյթ բարելաւելու համար։ Ագարակային տնտեսութիւնը ընդունելով անհամեմատ ցանկալի ձև հողային բարեկարգութեան մէջ, նախագիծը նոր օրէնքը տարածում է մանր սեփականատէրերի բոլոր հողերի վրա։ Բոլոր վէճերը հողային սահմանների և այլ դէպքերի մասին յանձնվում են հողային բարեկարգիչ մասնաժողովներին (ծափ.)։

Հողային բարեկարգութեան և երկրագործութեան գլխաւոր կառավարիչը, մատնանշելով որ նախագծի գլխաւոր և էական խնդիրն է՝ հնարաւորութիւն տալ ամեն մի հողատիրոջ իր տեսակի կարգադրել իր հողի կտորը և նրան աւելի օգտակար դարձնել, անում է այնուհետև մի քանի լրացումներ և պարզաբանութիւններ։ Վերջում գլխաւոր կառավարիչը հաւատում է, որ օրինագիծը կընդունվի օրէնսդրական հաստատութիւններից և այն ժամանակ ինքը ազգաբնակութիւնը կը ձեռնարկէ նրա քննութեան։

Գրվել են 31 հռետորներ։

Բէրէզօվսկին ասում է, որ կադէտները նախագծում չեն տեսնում խոր սկզբունքային տարաձայնութիւններ նոյեմբերի 9-ի օրէնքի քննութեան ժամանակ։ Նախագծի գլխաւոր պակասութիւնը միակողմանիութիւնն է։ Բէրէզօվսկին գտնում է, որ գիւղացիները այժմ հողերը ձեռք են բերում անհամեմատ թանգ գներով. պէտք է տեղերում հաստատել հողային բարեկարգութեան մասնաժողովներ։

Ռօդիչեվը առաջարկում է ամենից առաջ հոգ տանել օրինական կարգ մտցնել երկրում։ Հողաբաժան կարգը պէտք է իրականանայ սենատին ենթակայ հաստատութիւնների ձեռքով (ծափ. ձախից)։

Ամօսէնօկի, Կրուպօտովի, կոմս Ուվարօվի և Բուլատի խօսելուց յետոյ յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 4 և 42 րոպէին. խօսք է առնում Կուտլէրը, որ ասում է, թէ օրինագիծը սկզբունքային նշանակութիւն չունի, այլ զուտ տեխնիքական, և միայն այդ տեսակէտից պէտք է գնահատվի։ Վերջում նա ընդգծում է, որ անհրաժեշտ է վերակազմութեան ենթարկել հողային բարեկարգութեան հաստատութիւնները (ծափ. ձախից)։

Մի քանիսի խօսելուց յետոյ յայտարարվում է ընդմիջում մինչև ժամը $8^{1}/_{2}$-ը։

Նիստը վերսկսվում է ժամը 8 և 45 րոպէին։

Բելօուսօվը յայտնում է, որ սօցիալ-դեմօկրատները պահանջում են լայն դեմօկրատական բարենորոգումներ ժողովրդական աշխատանքի զարգացման պայմանները բարելաւելու համար։

Ճառախօսների ցանկը վերջանալուց յետոյ ընդունվում է դիմել յօդուածային ընթերցման։

Նախագահը յայտարարում է, որ առաւօտեան սօցիալ-դեմօկրատները հարցապնդում են ուղղել, որի հերթականութիւնը պէտք է որոշվի, և յանձնում է հարցապնդումը քարտուղարի պարտականութիւնները կատարող Զամըսլօվսկուն։ Սա յայտնում է, որ նա, իբրև հաւատարիմ հպատակ, հրաժարվում է կարդալ այդ բացարձակ հակաօրինական հարցապնդումը (բուռն ծափահարութիւն աջից)։

Նախագահ.—Գուցէ թոյլ կը տաք հարցապնդումը չը կարդալ։

Ձայներ ձախից.—Ոչ, կարդացէք։

Քարտուղարական տեղը գրաւում է Սօկօլով 2-դը և ձախակողմեանների ծափահարութեամբ կարդում է հարցապնդումը։ Ծայրայեղ աջակողմեանները թողնում են դահլիճը։

Սօկօլով 2-դը կարդում է սօցիալ-դեմօկրատների հարցապնդումը հիմնական օրէնքների 96-րդ յօդուածը գործադրելու կարգի մասին։

Պօկրօվսկի 2-րդը պաշտպանում է հարցապնդումի հերթականութիւնը։

Կօվալենկօն դէմ է։

Գուչկովը գտնում է, որ ներկայ հարցապնդումը ահագին նշանակութիւն ունի, թէև ոչ այն, ինչպիսին տուին նրան հարցապնդումները ուղղողները։ Այդ խոշոր հարցին նրանք կապեցին կուսակցական մանր խնդիրներ։ Ներկայումս Դումայի մասնաժողովները իրանց ձեռքի տակ ունեն զինուորական և ծովային 45 օրինագծեր, որոնց առիթով կասկած է զարթնում 96-դ յօդուածի գործադրութեան կարգի մասին։

Չխէիձէն ասում է, որ սօցիալ-դեմօկրատները ներկայ հարցապնդումով նպատակ ունեն երևան հանել հոկտեմբերեանների իսկական ֆիզիօնօմիան։

Նախագահը խնդրում է խօսել հերթականութեան մասին։

Չխէիձէն կարծում է, որ «Գուչկովի առարկութիւնը առարկութիւն է մի մարդու, որ չէ հասունացել մինչև սահմանադրութեան պաշտպանութիւնը (ծիծաղ) և եթէ Գուչկովը սօցիալ-դեմօկրատներին նմանեցրեց վատ փաստաբանների հետ, մենք էլ սօց.-դեմօկրատներս մեր հերթին կարող ենք ասել, որ Գուչկովի առաջարկութիւնները նման են վատ վաճառականի մտածողութեան, որին առաջարկում են իսկական գին առանց սակարկութեան (ծիծաղ)։

Քուէարկութիւն.—Հարցապնդումի հերթականութիւնը մերժվում է ձայների մեծամասնութեամբ ընդդէմ սօցիալ-դեմօկրատների և աշխատաւորականների։

Միաձայն հարցապնդումը յանձնվում է մասնաժողովի երկու շաբաթով։

Նիստը փակվում է ժ. 11 և 20 րոպէին։

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ամսիս 15-ից Թիֆլիսում սկսվում են զինուորակոչութեան ատեանի զբաղմունքները վօկզալի մօտ գտնվող «պերեսելնի» կայանում։ Զբաղմունքների ամբողջ ընթացքում ամբողջ քաղաքում գտնվող գինետները և ամեն տեսակ ոգելից խմիչքների խանութները փակ են լինելու, որ կը տևէ 5—6 օր։

◆ Հոկտեմբերի 12-ին Թիֆլիսի նահանգապետը ուղարկեց հանգուցեալ Շամխարեանի անուան թոշակների կանօնադրութիւնը քաղաքագլխին։ Համաձայն հանգուցեալի կամքի, նրա թողած դրամագլխի և կայքի եկամուտների 60%-ով, որ կազմում է տարեկան 5640 ր., հաստատվում են 145 թոշակաւորների տեղեր «Իվան Արտեմեվիչ Շամխարեանի թոշակներ» անունով։ Յիշեալ 145 թոշակները նշանակվում են Թիֆլիսեցի երկսեռ ամենաաղքատ երեխաներին հետևեալ կարգով. 1) ամբողջ թոշակի $^{2}/_{3}$ մասը հայ-լուսաւորչական դաւանութեան երեխաներին և 2) $^{1}/_{3}$-ը միւս ազգութիւնների երեխաներին առանց կրօնի խտրութեան։ Վերոյիշեալ դրամագլխի տոկոսիքը բաժանվում են կրթական հաստատութիւնների վրա այսպէս։ 1) բարձրագոյն կրթական հաստատութիւններում 3 թոշակներ՝ ամեն մինը 400 րուբլու, 2) միջնակարգ կրթական հաստատութիւններում 12 թոշակներ՝ ամեն մինը 100 ր., 3) Թիֆլիսի քաղաքային իգական պրոֆէսիօնալ արհեստանոցում 3 թոշ.՝ 36-ական րուբլու, 4) Թիֆլիսի Միքայէլեան քաղ. արհեստաւորաց դպրոցում 3 թոշ.՝ 36-ական ր., 5) գեղարուեստը հովանաւորող Թիֆլիսի ընկ. նկարչական դպրոցում 3 թոշ.՝ 40-ական ր., 6) քաղաքային տարրական ուսումնարաններում 121 թոշակաւոր՝ 24-ական րուբլի։ Բարձրագոյն կրթական հաստատութիւնների թոշակներից նշանակվում են մեկը Պետերբուրգի պօլիտեխնիկումում, մեկը Պետերբուրգի կանանց բարձր դասընթացներում և մեկը Մօսկվայի համալսարանում. դրանցից առաջին երկուսը հայերի համար, իսկ երրորդը միւս ազգաբնակութեան պատկանող երիտասարդների համար։ Երբ Թիֆլիսում բացվի բարձր կրթական հաստատութիւն, բոլոր երեք թոշակները փոխադրվում են այդ հաստատութեան մէջ, դարձնելով 3-ը 6 և 400 րուբլի ամեն մինի համար դարձնելով 200 ր.։ Միջնակարգ դպրոցների թոշակներից երեքը բաժին են ընկնում Թիֆլիսի կանանց 5-րդ գիմնազիային, Թիֆլիսի Հաւլաբարի արական գիմնազիային, Թիֆլիսի առևտրական դպրոցին և ռէալական դպրոցին։ Հաւլաբարի գիմնազիայի թոշակներով պահվելու են 6 աշակերտներ, պակասեցնելով ամեն մի թոշակի գումարը 50 րուբլու։

◆ Կոմսուհի Ե. Ա. Վօրօնցօվա-Դաշկօվան իտալական դեսպանից ստացել է հետևեալ նամակը. «Ձերդ պայծառափայլութիւն. ես հէնց այս րոպէիս ստացայ 19,017 ր. 66 կ., որ ժողովել էք դուք Կովկասում Սիցիլիայի և Կալաբրիայի երկրաշարժից վնասվածների օգտին։ Շտապում եմ արտայայտել ձեզ իմ առանձին շնորհակալութիւնը այդ նուիրատուութիւնների համար և խնդրում եմ ընդունել իմ կառավարութեան անկեղծ երախտիքը, որի զգացմունքների թարգմանն եմ հանդիսանում ես։ Տեղեկացնելով ձեզ, որ ես անմիջապէս այդ փողերը ուղարկեցի նորին մեծութիւն իտալական թագուհուն, օգտվում եմ դէպքից խնդրել ձեզ ընդունել իմ յարգանքի հաւաստիքը։ Իտալական դեսպան Մելէգարի»։

◆ Վաղվանից Անդրկովկասեան երկաթուղու երթևեկութիւնը կատարվում է ձմեռային դասաւորութեամբ։ Գնացքների ցուցակագրութիւնը «Մշակի» ընթերցողը թող կարդայ այս համարի «Տեղեկատու» բաժնի մէջ։

◆ Համաձայն Կարսի շրջանի զինուորական նահանգապետի միջնորդութեան, Կովկասի Փոխարքան թոյլատրել է յետաձգել այն 6500 րուբլու գանձումը յօգուտ պետական գանձարանի, որ տրված է փոխատուութեան ձևով 1905 թւին շրջանային օժանդակիչ գանձարանին։

◆ Կիրակի օրը, հոկտ. 11-ին, Պարսկաստանից վերադարձան 3-դ և 4-դ հրացանաձիգ կովկասեան բատալիօնները։

◆ Թիֆլիսի Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտին կից հաստատվում են Ֆրեբէլեան ընկերութիւն և յետոյ Ֆրեբէլեան ինստիտուտ Կիեվի և Պետերբուրգի Ֆրեբէլեան ինստիտուտների նման։ Ընկերութեան կանօնադրութիւնն արդէն մշակված է և շուտով սպասվում է նրա հաստատութիւնը։

◆ Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանում անցեալ սեպտեմբեր ամսում գիշերել են 123 հոգի 1926 անգամ։ Յիշեալ թւից 58 հոգի ռուսներ են, 445-ը հայեր, 225-ը վրացիներ, 45-ը լեհեր, 35-ը գերմանացիներ, 1-ը թուրք և 1-ը լիտվին։

◆ Մարիամ Յովհաննիսեանը, լինելով պառաւ կին, ցանկանում է իր երկու փոքրիկ թոռների հետ գնալ աքսորական որդու մօտ՝ Րոստով Դ/վ.։ Կինը զրկված է ամեն միջոցներից և ներկայումս գիշերում է սրա-նրա տանը։ Նա դիմում է բարեգութ մարդկանց խղճին, աղերսելով օգնել իրան իր թոռներով գնալ Րոստով որդու մօտ։ Բարեգործական Ընկերութիւնից յոյսը կտրել է՝ դիմելը մաշելուց և ոչինչ չը ստանալուց յետոյ։ Ցանկացողները թող անձամբ տեսնեն պառաւին քաղաքային ապաստարանում, Վանքի մեծ փողոցում։ Նուէրներ յօժարակամ կընդունի նաև խմբագրութեան գրասենեակը։

◆ Մի վրիպակ։ «Մշակի» երէկվայ համարի առաջնորդող յօդուածի մէջ մտել է մի տպագրական սխալ. գրված է՝ «որոնք միայն կրօնական հանգամանքի տակ վայելում են աշխարհական և արդիական «ինքնակալական իրաւունքներ»։ Պէտք է լինի «ինքնավարական իրաւունքներ»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսի և Թիֆլիսի գաւառի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ տուգանվել է «Մշակ» թերթի խմբագիրը 300 ր., իբրև մեղաւոր 22 փետրվարի 1908 թ. հրատարակված ապագրութեան պարտադիր կարգադրութեան I կէտի խախտման համար։

◆ Հոկտ. 11-ին, երեկոյեան 8 ժ., վրաց ազնուականութեան թատրոնում մինչև ներկայացման սկսվելը անխօս դերակատարներից մէկը անզգուշութեամբ բացել էր հրդեհաշէջ խողովակի կրանը, որից ջուրը դուրս հոսալով անցել էր բեմը, սակայն շնորհիւ իսկոյն և եթ ձեռք առած միջոցների՝ կրանը փակեցին և ջրի հոսալը կտրվեց։ Այդ բանից ոչ մի անհանգստութիւն տեղի չունեցաւ։

◆ Հոկտ. 11-ին 6-րդ ոստիկանական թաղամասում տեղի ունեցաւ շուրջկալ. ձերբակալվեցին 11 անցագիր չունեցող անձինք։ Նրանց ով լինելը պարզվում է։

◆ Սեպտեմբեր ամսվայ ընթացքում, ինչպէս երևում է ոստիկանական օրագրութիւնից, 106 տեղի ունեցած յանցանքների պատճառով ձերբակալված են 262 յանցաւորներ և երկու դէպքում յանցաւորները չեն բռնված։ Յանցաւորներին ձերբակալելու համար ամենամեծ չափով եռանդ ցոյց տուին V, X և XI ոստիկանամասերի աստիճանաւորները, որի համար նրանց և պրիստաւներին վերոյիշեալ ոստիկանամասերի՝ ոստիկանապետը յայտնում է շնորհակալութիւն։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Բեռլինից «Голосъ Москвы» լրագրին հեռագրում են արժանահաւատ աղբիւրներից, որ սօւդնիկ-պատգամաւորների Բեռլին գալը բարձրագոյն շրջաններում անցանկանալի է համարվել։ Նրանք չեն ընդունվելու պաշտօնապէս և առհասարակ նրանց ճանապարհորդութեամբը չէ տրվելու ոչ մի քաղաքական նշանակութիւն։

◆ Պարիզից «Г. М.»-ի թղթակիցը գրում է, որ այնտեղ լուրեր են տարածված, որ Բուրցէվի մերկացումը «Բունդի» կենտրոնական կոմիտէտի անդամի վերաբերութեամբ արված է շնորհիւ սենատոր Կովալենսկուց ստացված փաստաթղթերի, որը իր ինքնասպանութիւնից առաջ Բուրցէվին ուղարկել է մի ամբողջ ցուցակ գաղտնի յեղափոխականների, որոնք շփվում են ոստիկանութեան դեպարտամենտի հետ։ Բուրցէվը խոստանում է մի շարք նոր մերկացումներ անել։

◆ Միապետականների ամենահպատակ զգացմանց հեռագրին իբրև պատասխան Թագաւոր Կայսրը ուղարկել է Միտրոպոլիտ Վլադիմիրի անունով հետևեալ պատասխանը.

«Յանձնարարում եմ ձեզ, սրբազան հայր, հաղորդել ռուս մարդկանց համագումարի բոլոր անդամներին, ինչպէս նաև Մօսկվայի միապետական միութեան անդամներին, Իմ շնորհակալութիւնը նրանց ամենահպատակ զգացմունքների համար։ Գիտեմ, որ նրանք պատրաստ են հաւատարիմ և պատւով ծառայելու Ինձ և հայրենիքին, խիստ յարգելով օրինականութիւնն ու կարգ ու կանօնը»։ («Г. М.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 12-ին, տեղի ունեցաւ հայ դերասանական խմբի առաջին ներկայացումը Թիֆլիսի Արտիստական թատրոնում։

Ցաւալի է արձանագրել, որ հասարակութիւնը չէր բարեհաճել հետաքրքրվել առաջին ներկայացումով և հազիւ լցրել էր թատրոնի մի երրորդ մասը։

Ներկայացվում էր հասարակութեան կողմից սիրված «Դաւաճանութիւն» պիէսը։

Դերասանները, ինչպէս երևում էր, աշխատել էին պիէսի վրա։

Զէյնաբ թագուհու դերը վերցրել էր այս անգամ տիկին Մայսուրեան։ Իբրև փորձված դերասանուհի նա խաղում էր հմտութեամբ և մտցրել էր ինքնուրոյն տարրեր մի քանի տեսիլներում։ Նրա ներկայացրած տիպը, սակայն, տարբերվում է նախկիններից։ Մայսուրեանի Զէյնաբը շատ է լաւկան, շատ է ողբերգական։ Նա այնքան հերոսական և ազգասիրական անձնաւորութիւն չէ, որքան կին է և տանջված մայր։

Միւսները պահպանում էին անսամբլը։

Րեժիսէօրական մասը կրում էր խնամքի և հոգատար վերաբերմունքի կնիք իր վրա։

Հասարակութիւնը վարձատրեց դերակատարներին ծափահարութիւններով։ Տ.

ՄԱՄՈՒԼ

Խօսելով երիտասարդ-թիւրքերի ձգտումների մասին, Կ. Պօլսի «Հայրենիք» թերթը շեշտում է այն երևոյթը, որ նրանք երկիրը փրկելու համար գործ դրած կարևոր միջոցների շարքում համարեցին Բեռլինի դաշնագրի մի քանի յօդուածները (մանաւանդ 61-րդ յօդ.) և պատրիարքարանների վաղեմի իրաւունքների ջնջումը։

Երկու ջնջումներն ալ արտայայտութիւն մըն են այն մասնաւոր մտայնութեան, որ այսօր երիտասարդ-թիւրքերուն մտայնութիւնն է, և որ բաղադրեալ է ցեղային հպարտութենէ, տիրողական մտահոգութիւններէ և ձուլումի փափագներէ։

Մենք չենք, որ պիտի այպանէինք առաջինը։ Իցի՜ւ թէ անոնք ունենան ցեղային հպարտութեան այն ազնիւ տեսակը, որ կը բարձրացնէ, որ կարգիլէ ցածերն իյնալ և ստորնութիւններու գլորելէ. իսկ գալով տիրողական մտահոգութիւններու և ձուլումի փափագներուն, մենք իրաւունք ունինք ցոյց տալու իրենց, թէ ծուռ կը սխալին, ծուռ կը չափազանցեն, ծուռ ոսկի ժամանակնին կը վատնեն անօգտակար կերպով։

Այդ ջնջումների մասին եւրոպական մի դեսպան հետևեալ կարծիքն է յայտնել.

Դեսպան մը, խօսելով յունաց պատրիարքարանի մասին, դիտել տուած է, թէ չորս հարիւր տարիէ ի վեր կիրարկման մէջ գտնուող իրաւունքներ չեն կրնար ջնջուիլ ակնթարթի մը մէջ, ըլլան անոնք վաւերացեալ մագաղաթեայ ֆէրմաններով, ըլլան միայն սովորութիւն և բարք։ Ամեն պատրիարքարանի ետին կան միլիօններով ժողովուրդներ, որ դարերէ ի վեր վարժուած են տեսնել իրենց պատրիարքին մէջ հայր մը, պաշտպան մը, օգնական մը ընդդէմ իրենց եղած անիրաւութիւններուն ու զրկանաց։ Ահա յունին և հայուն ընդհանուր մտայնութիւնը, որ իրականութիւն մըն է, որուն դէմ պիտի բաղխի նոր քաղաքականութիւնն, ամենադժբաղդաբար։ Մեր երիտասարդ-թիւրքերը կը ձգտին ստեղծել այսպէս բիւզանդական կուիներու նոր շարք մը, որուն մէջ թէ իրենք և թէ մենք՝ քրիստոնեաներս՝ պիտի մտցուինք, մեր կամքին հակառակ, խելք ու ժամանակ վայրապար վատնելու։

*

Վիէննայի «Հանդէս Ամսօրեայի» սեպտ.-հոկտ. ամիսների միացեալ համարի մէջ շարունակվում է տպվել հայ-վիրական յարաբերութիւնների մասին պատմական տեսութիւնը, հեղինակութիւն հայր Ն. Ակինեանի։ Տպված է նաև Սմբատ Շահազիզի մասին մի ուսումնասիրութիւն՝ Գրիգոր Բալասանեանի։ Այս և նախորդ ուսումնասիրութիւնների մասին մենք կը խօսենք, երբ նրանք կը հրատարակվեն առանձին գրքով, ինչպէս յայտնված է։

*

Լոյս տեսաւ և «Լումայ» ամսագրի յուլիս-օգոստոս ամիսների միացեալ համարը, որի մէջ ուշադրութեան արժանի է Մ. Ա. Օ.-ի պատմական ուսումնասիրութիւնը հայոց կաթողիկոսների մասին։ Ներքին տեսութեան հեղինակը՝ Գ. Ե. քննութեան առնելով այն հարցը՝ թէ ինչ է պատճառը այն ցաւալի երևոյթի, որ հայերը Ռուսաստանում լայն կերպով արձագանք չեն տալիս ադանացիներին օգնելու կոչին, որ անում են «Баку» և «Մշակ» լրագիրները, տալիս է մի բացատրութիւն, որ մեզ թւում է միակողմանի։

Ահա ինչ է ասում.

«Մենք ռուսահայերս այժմ չենք օգնում ադանացիներին, նախ՝ որովհետև մենք յոգնել ենք նրանց (թիւրքահայերին) օգնելուց, երկրորդ՝ որովհետև յանուն թիւրքահայերի փրկութեան սկսեցին մեզ սպանել, բռնաբարեցին մեր կանանց և որդիներին և վարկաբեկ արին այն սուրբ գործը, որի համար ռուսահայը ոչինչ չէր խնայում, որովհետև բռնութեամբ չի կարելի համակրութիւն առաջացնել դէպի այն գործը, որի անունից կատարվել է բռնութիւնը»։

Մենք այս կարծիքը համարում ենք միակողմանի։ Ընդունում ենք, որ յանուն թիւրքահայերի փրկութեան մեր «տնաստուն յեղափոխականները» զզւեցրին հայ հասարակութիւնը, երբ նա տեսաւ, որ բռնութեամբ և յանուն ազգի փրկութեան կորզված փողերը ծառայում են միայն այս և այն յեղափոխականի անձնական հարստութեան դիզման. բայց այնուամենայնիւ ինչքա՞ն է մեղաւոր խեղճ ադանացին, ինչքա՞ն են մեղաւոր հազարաւոր որբերը։

*

«Баку» թերթը, քաղելով «Ազատամարտ» լրագրից, հաղորդում է, թէ Կ. Պօլսի հայոց ազգային ժողովը ստացել է հեռագիր Զէյթունից այն մասին, որ թիւրքաց կառավարութիւնը ուղարկել է այդտեղ զօրք՝ պատուէրով՝ ցրել զէյթունցիներին շրջակայ գիւղերում։

Եւ այս լուրը տպում է մի լրագիր, որ

են լուռ հանդիսատեսներ այն նոր կարգերի, որոնց մասին գիտէ և այնքան անթարթ ուշադրութեամբ հետևում է Եւրոպան։ Արթնանում է հին թշնամութիւնը և անվստահութիւնը։ Ակնյայտ է, որ նորը դեռ ծնանում է։

Անգամ պարլամենտի ընտրութիւնները չը հետաքրքրեցին ժողովրդական մասսաները։ Նրանք դեռ ուշքի չեն եկել, չեն կշռադատել անցքերը, չեն հասկացել և որոշել իրանց յարաբերութիւնը կենտրոնի հետ և դէպի իրար։

Քաօս է տիրում և վերին շերտերում։ Սահմանադրութիւնը հրատարակվելուց յետոյ 9 ամսվայ ընթացքում կառավարութիւնը փոխվեց մի քանի անգամ։ Եղաւ զինուորական բունտ Կ. Պօլսում, և դա վերջինը չէ։ Առաջ են գալիս անվստահ կերպով կուսակցական կազմակերպութիւններ։ Հին նշանաւոր պաշտօնեաներ փոխարինվում են նորերով, տեղափոխվում են մի տեղից միւսը։ Անգամ մի սուլթան փոխարինեցին միւսով։ Բայց թէ նոր սուլթանը, թէ մինիստրները և մեծ ու փոքր պաշտօնեաները չը գիտեն ինչից սկսեն։

Կ. Պօլսի մի խոշոր դիպլօմատ ինձ պատմում էր, թէ մինիստրներից մէկը չէր համարձակվում իր ճիւղի վերաբերեալ անել մի կարգադրութիւն։

— Ախր չէ՞ որ դա ձեր իրաւունքն ու պարտականութիւնն է,—ասում է մինիստրին դիպլօմատը։—Ի հարկէ, ձեր գործողութիւնները կարող են դատողութեանց նիւթ ծառայել պարլամենտում և հասարակութեան մէջ։ Հէնց դրա համար էլ դուք սահմանադրական մինիստր էք։ Իսկ պարլամենտը չէ կարող իր վրա վերցնել վարչական պարտականութիւններ։

Մինիստրը անպատճառ ուզում էր պարլամենտից հարցնել՝ ինչպէս վարվել այս դէպքում. ըստ օրինի՞ թէ ոչ։

Չը նայած շիտակ մտադրութիւններին, չինօվնիկները չեն կարող կաշառք չը վերցնել։ Չեն կարող, որովհետև ռոճիկը քիչ է, իսկ կարիքները տասնապատիկ շատ։ Որոշ աստիճանի պաշտօնեան, որ համեմատ իր դրութեան սովոր է ամիսը ծախսել 3000 ղրուշ (250 ր.), նշանակովի ռոճիկ ունի միայն 300 ղրուշ, այն էլ ստանում է ոչ կանօնաւոր կերպով։ Դա ի հարկէ կառավարութեան մեղը չէ. փող չը կայ։

Եւ այնուամենայնիւ երիտասարդ-թիւրքերը խստիւ արգելում են կաշառքը։

— Հը, ինչպէս է այժմ կաշառքի բանը, —հարցնում եմ ես Սիրիայում և Պալէստինում։

— Շատ վատացել է բանը. այն, ինչ առաջ բանը գլուխ էինք բերում 100 ղրուշով, այժմ չէ աջողվում և 300-ով։ Վախենում են և ի հարկէ անհամեմատ շատ են պահանջում։

Կեանքի սովորական հեգնանքն է. այդպէս կերպարանափոխվում են կեանքի մէջ շատ բարի ցանկութիւններ։ Հին ճշմարտութիւն է, որ բարի ցանկութիւններով դժոխքն է քարված։ Եւ բաւական չեն բարի ցանկութիւններ, մանաւանդ մի այնպիսի դժուար գործում, ինչպիսին է քաղաքական շինութիւնը. գործը աւելի հաստատ կը լինէր, եթէ փող ունենային։ Բայց թիւրքիան փող բոլորովին չունէ։ Նա վաղուց է յայտարարված որպէս սնանկ պարտական, և նրա վրա ծանրանում է Եւրոպայի խնամակալութիւնը։ Միջազգային «Dette Publique»-ը (հասարակական պարտք) կառավարում է թիւրքերի վարկի գործը. այդ նպատակով նրա գանձարանին են մտնում որոշ պետական հարկեր։ Եւ ամեն մի չնչին փոխառութեան առիթով բանկիրները հարցնում են՝ «Իսկ ինչ հարկերի գրաւականով ես ուզում փողը»։

(Կը շարունակվի)

մի օր առաջ յանդիմանում էր «Մշակը», թէնա հաղորդում է իբրև իրողութիւն այն, ինչ որ միայն «լուր է և ենթադրութիւն»...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 7 նոյեմբերի

Ազգիս Վեհափառ Հայրապետի հաճութեամբ և պատուէրով դիւանս ուղարկելով սրա հետ Նորին Սրբութեան շրջաբերական կոնդակի պատճէնը, որ ուղղված է Ռուսաստանի բոլոր Թեմերի առաջնորդներին ամսիս 5-ին, յարգանօք խնդրում է յարգելի խմբագրութեանդ Թերթիդ մօտակայ համարներից մէկում տեղ տալ յիշեալ պատճէնի հրատարակման՝ ի գիտութիւն ընդհանրութեան։

Դիւանապետ Յուսիկ վարդապետ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ

(Իմ պատասխանը)

Գուցէ «Մշակի» ընթերցողներն այլ ևս չէին սպասում, թէ իմ դէմ եղած առարկութիւններին ես վերջ ի վերջոյ պէտք է պատասխան տամ, քանի որ շատ ժամանակ է անցել իմ դէմ գրողների յօդուածների տպագրութիւնից յետոյ։ Բայց թող նրանք ներողամիտ լինեն, որովհետև իմ բազմատեսակ զբաղմունքներս և ուրիշ կարևոր հանգամանքներ ու ինձնից անկախ պատճառներ ստիպում էին ինձ միշտ յետաձգել ասելիքս աւելի յարմար բոպէի։ Այժմ էլ մանրամասն, ընդարձակ պատասխան տալ չեմ կարող և չեմ ուզում, որովհետև մտադրութիւն ունեմ մօտիկ ապագայում (գուցէ ամենաշատը մի երկու ամսից յետոյ) իմ ամբողջ տեսութիւնը հայոց եկեղեցու վերանորոգութեան մասին կրկին անգամ մի գրքոյկի մէջ ամփոփել և աւելի որոշ կերպով հիմնաւորել, միանգամայն պարզելով իմ և առհասարակ նոր սերնդի դիրքը դէպի եկեղեցու դաւանանքը, պաշտամունքը, կազմակերպութիւնն ու եկեղեցական կեանքը։ Ուրեմն ովքեր որ ինձանից մանրամասն բացատրութիւն են ուզում իմ հայեացքների և տեսութիւնների մասին, թող մի երկու ամիս էլ համբերութիւն ունենան։ Իսկ այս տողերի նպատակն է միայն մի քանի թիւրիմացութիւններ պարզել, որ արտայայտել են իմ յօդուածի առիթով կամ ինձ սխալ հասկանալով, կամ ամենևին չը հասկանալով։

Այդպիսի թիւրիմացութիւններից ամենից խոշորն ի հարկէ տէր տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցի կարգադրութիւնն էր՝ «Արարատից» պոկել-հանել և այրել իմ յօդուածը։ Մի կարգադրութիւն, որ արատ ու անպատւութիւն լինելով հայոց եկեղեցու ազատախոհ ոգուն, միևնոյն ժամանակ պարզում էր, որ տասնեակ տարիներից ի վեր նոր, ժամանակակից գիտութեամբ օժտված հոգևորականների դէմ սկսված խուլ պայքարն ու հալածանքը՝ Էջմիածնի պատերի մէջ, արդէն դուրս էր գալիս իրան համար գծված խլուրդային շրջանակից և հրապարակային բնոյթ էր ստանում։ Բայց գաղափարը կամ միտքը հալածել՝ նշանակում է տարածել այն, և այս նոր օրինակ հալածանքի դրդիչներն ու հերոսները կոր ի գլուխ և ամօթահար ստիպված էին տեսնել այն խայտառակութիւնը, որ իրանց ձեռքով բերին իրանց գլխին, ստիպված էին զգալ, որ իրանց ոչնչութեան հաւասար ոյժով անկարող են առնել ազատ մտածողութեան և իր արտայայտութիւնների առաջը և որ հայ ժողովուրդն այլևս լուռ ականատես լինել չէ կարող, երբ իրան առաջնորդելու կոչվածներն առաջ տանելու փոխարէն դէպի յետ՝ միջին դար են մղում իրանց։

Այն զայրոյթն ու դժգոհութիւնը, որ արտայայտվեց այդ առիթով, թող գոնէ խրատ ծառայէ մեր բարձրագոյն հոգևորականութեան համար՝ այնպիսի խնդիրների մէջ չը մտնել, որտեղից միայն ամօթահար դուրս գալ կարող են. յատկապէս թող զգուշանան նրանք սկզբունքի խնդիրների հետ խաղ անելուց։ Որովհետեւ սկզբունքն այնպիսի բան է, որ չէ կարող ճանաչել ոչ մի դիսցիպլինար հեղինակութիւն։ Սկզբունքի տէր մարդու համար հեղինակաւոր նշանակութիւն ունի միայն իր անհատական խղճի ձայնը եւ ուրիշ ոչինչ եւ ոչ ոք։ Եթէ հայոց եկեղեցին պէտք է այնքան գնով ձեռք բերված խղճի ազատութեան անգամ հալածել սկսէ, ուրեմն այն սկզբունքին հակառակ գնայ, որի վրա հիմնված է ամենայն քրիստոնէական եկեղեցի, այդ նշանակում է, որ հայոց եկեղեցու վերջնական անկումը արդէն կատարված իրողութիւն է։ Մեզ կը մնայ միայն ցաւել այն կարճամիտների կուրութեան վրա, որոնք հայրերի աւանդը անաղարտ պահելու ցնորական տենչով՝ ոչնչացնել են աշխատում քրիստոնէական եկեղեցու հիմքը՝ մարդկային ազատ խիղճն ու միտքը։

Բայց անցնենք միւս թիւրիմացութիւններին։

Երուանդ վարդապետ

(Կը շարունակվի)

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԸ ԵՒ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ

Խնամիութիւնը և Թայֆայականութիւնը մեզ մօտ՝ հասարակական ասպարէզի վրա ծայր առին մի նոր այլանդակութեան ևս։ Մենք իմացել և տեսել ենք, թէ ինչպէս մի որևէ ժողովրդի որոշ դասակարգեր, տնտեսապէս հարստահարված ու քայքայված, տալիս են մեծ թւով պանդուխտներ, որոնք հայրենիքից հեռու վայրերում՝ օտարութեան մէջ աշխատում, չարչարվում են մի քանի գրօշներ յետ գցելու և հոգալու համար իրանց ընտանիքի ամենաանհրաժեշտ կարիքները և այդպիսով մայրենի օջախը վառ պահելու։

Մեզ մօտ գալիս են Թիւրքահայաստանից հազարաւոր պանդուխտներ, մշակներ, որոնք անասելի նեղութիւններ կրելուց յետոյ, վերջ ի վերջոյ, դառնում հայրենիք և դառն քրտինքով վաստակած գրօշներով մի կերպ կարողանում են պահպանել իրանց սիրելիներին՝ ընտանիքը։ Իւրաքանչիւր տարի Ռուսաստանի շատ նահանգներից հազարաւոր գիւղացիներ, տնտեսական պայմաններից ստիպված, չւում են հեռաւոր երկիրներ՝ դէպի «отхожіе промыслы», կողմնակի աշխատանքով վաստակ ձեռք բերելու համար, որպէսզի գէթ մասամբ կարողանան բարւոքել իրանց քայքայված տնտեսութիւնը մայր երկրում։ Սակայն մենք չէինք իմացել ու լսել, որ հայ ուսանողն ևս իր նիւթական դրութիւնը բարւոքելու համար կը դարձնէ բազմաչարչար նահատակ հայ դպրոցը մի տեսակ «отхожій промыселъ», կը թողնի ժամանակաւորապէս համալսարանը, կը ստանձնէ և կը վարէ հայ դպրոցներում ուսուցչի պաշտօն նոյնպէս ժամանակաւորապէս և, այդ ճանապարհով մի կլորիկ գումար սեղմելուց յետոյ, անմիջապէս, դարձնելով երեսը դպրոցից, վազ կը տայ համալսարան իր ուսումը աւարտելու՝ ստանալու դիպլոմ, որը բանալու է նրա համար երջանկութեան և հարստութեան ուղիները մեր հնաշխարհիկ կեանքի մէջ։

Ներկայումս մեր ոչ թէ միայն ծխական, այլ նոյնիսկ միջնակարգ դպրոցներում շնորհիւ խնամիութեան և Թայֆայական խարլիկի հրաւիրված են ուսանողներ ուսուցչական պաշտօնի համար։

Ասացէք, խնդրեմ, ինչ արդիւնք կարելի է սպասել մի ուսանող-ուսուցչից, որը, ոչ մի գաղափար չունենալով դպրոցական դաստիարակութեան մասին, ձգտում է համալսարանը, գիտութիւնը միմիայն նրա համար, որ, հայ դպրոցում ուսուցչական պաշտօն վարելով, դրամներ հաւաքէ և նորից դառնայ համալսարան։ Ի՞նչ է իրանից ներկայացնում այն ուսանող-ուսուցիչը, որն ոչ թէ տոգորված կրթութեան և ուսուցչութեան բարձր գաղափարներով կամ ուսուցչի վեհ կոչումը կրելու համար է իրան նուիրում դպրոցական ասպարէզին, այլ միմիայն նրա համար, որ իր նիւթականը բարւոքէ։ Այդ տեսակ ուսանող-ուսուցիչը չէ՞ որ իրան համարելու է մի ժամանակաւոր հիւր դպրոցում մի կամ երկու տարով, իսկ դպրոցը՝ շահագործման ասպարէզ։

Մի՞թէ պարզ չէ, թէ ո՞րչափ է տուժելու հայ նահատակ դպրոցը այդ տեսակ ուսանող-ուսուցիչների ձեռքում։ Մի՞թէ վայել է ուսանող կոչում կրողին ազգի կօպէկներով, մինչև իսկ մուրացկանութեամբ պահպանվող դպրոցները համարել մի ասպարէզ, ուր թոյլ է տրվում ամեն մէկին դալլալութիւն անելու անձնական և նիւթական շահերի և երջանիկ ապագայի ստեղծման համար։

Սակայն այս ամենը ներկայումս կատարվում է առանց խիղճն անգամ շարժելու մեր դպրոցական գործի գլուխ կանգնած պատասխանատու անձանց։ Շա՜տ ափսոս։ Ով, ով, բայց գոնէ ուսանող կոչում կրողը պէտք է այլ վերաբերմունք ունենար դէպի մայրենի դպրոցը...

Կալխաս

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ուժեղացված պահնորդութեան գործողութիւնների ժամանակամիջոցը Եկատէրինբուրգում, Վերխոտուրիում և նրանց գաւառներում երկարում է մինչև 1910 թ. սեպտ. 4-ը։ Արտակարգ պահնորդական դրութիւնը Բախմուտի գաւառում շարունակվում է մինչև 1910 թ. ապր. 20-ը, Եալտայում և գաւառներում և Տաւրիկեան նահանգում երկարում է մինչև 1910 թ. ապր. 26-ը, Անդրկասպեան երկրում, Կրասնովօդսկում, Ղզըլ-Արվատում, Ասխաբադում և Մերվում—մինչև 1910 թ. մարտի 17-ը, Վարշավայի, Լիւբլինի և Սեդլեցկի նահանգներում երկարում է մինչև 1910 թ. սեպտ. 4-ը։

«Պետերբուրգի Ցայտոնգի» խմբագիր Կիւգէլգէնը ենթարկվեց 1000 րուբլի տուգանքի «Ֆինլանդիա, Հէլսինգֆորս» յօդուածի համար։ «Զէմշչինայի» խմբագրութիւնը ենթարկվում է 300 ր. տուգանքի 73-րդ յօդուածի հակառակ հեռագիր տպելուն համար։

ՏԱՇԿԵՆՏ։ Եկաւ ձիւն. սառնամանիքը հասնում է 4 աստիճանի։

ՄՕՍԿՎԱ։ Ժամը 10-ին առաւօտեան երեք զինվածներ փորձեցին կողոպտել Հիւսիսային բանկը Կուզնեցկի փողոցում։ Փորձը չաջողվեց։

ՉԵՐՆԻԳՕՎ։ Նահանգապետ Մակլակօվը, վերադառնալով գիշերվայ ժամը 3-ին ձիով նահանգից, զեմստվային հիւանդանոցի մօտերը ձիուց ընկաւ փոսի մէջ և կոտրեց ոտքը։

ՍՕՖԻԱ։ Ֆերդինանդ Թագաւորը երէկ երեկոյեան մեկնեց։

ԲԵՐԼԻՆ։ Դատաստանական պալատի նախագահ Լիսկօն նշանակվեց արդարադատութեան մինիստրութեան ստատս-սեկրէտար։

ԼՈՆԴՈՆ։ «Դիանա», «Բօգատիր» և «Աւրօրա» նաւերը եկան Դէվօնպօրտ։

ԲԵԼԳՐԱԴ։ Բօլգարական Թագաւորը տեղեկացրեց սերբիական կառավարութեան, որ մտադիր է գնալ Պօպէվնիկի լեռները, որոնք աչքի են ընկնում բնական գեղեցկութիւններով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայրաքաղաքում օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացան 11, մեռան 2 հոգի. հիւանդ պառկած են 264 մարդ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօստատար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով, միայն ըստ հարկի կարեւորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Մարդատար գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջեւան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար ապրանք.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագօններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօստային՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար գնացքը 8 ժ. 42 ր. երեկ., մարդատար № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., մարդատար № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բաթում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստային՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագօններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հիւանդանոց
Մշտական մահճակալներով
Թիֆլիս, Միխայլովսկի պր. 59, տել. 1026
Հիւանդների ընդունելութիւն.
ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւ.։
Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ։
Վ. Վ. ՎՆՈՒԿՈՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ։
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժամը 10—11-ը, ներքին և երեխաների հիւանդութիւններ։
Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. ժ. 1—2-ը, կանանց հիւանդ. և մանկաբարձ.։
Ա. Դ. ԿԱԼՄԸԿՕՎԱ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ։
Բժշկութիւն էլեկտրականութեամբ, մասսաժով և հիպնօզով։ Միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումն։ Ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կ.։ Օպերացիաները և համախորհրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից
(կ. և. ու.) 100—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Փոխադրվել է նոր բնակարան՝ Գօլովինսկի պրօսպէկտ, տ. Դօբրժանսկու, № 18.
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը ամեն օր (առ: 10—12 ժ. (երեկ. 6—7 ժ.
(ա. օ.) 1063. 10—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր | առաւօտեան 9—12 ժ. | երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—1

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12\frac{1}{2}$—2. (երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Հայրենիք մեկնելու պատճառով
ԾԱԽՎՈՒՄ Է
Մանրուքի խանութ
Հասցէն՝ Բէհբութեան փող. № 48.
Հարցնել Աստուածատուր Աբրահամեանին։
(ա. օ.) 1067. 4—4

ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!!
2 ր. 75 կ.։
Ուղարկում ենք վերադիր վճ. «Տրիումֆ» շէվիոտը, $4\frac{1}{4}$ արշ., տղամարդկանց հագուստի համար։ Չը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է։ Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշւին։ Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—ва „ЭХО", г. Лодзь, № 15.
Թղթակցութիւնները ռուսերէն լեզւով։
(հ.կ.) (B. 58110) 947. 0—7

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ
30 ՄԷՏԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՎ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
Կսէնիևսկայա փող. № 7, սեփ. տ., «ՎԵՏՑԵԼ» հիւրանոցի մօտ։
Տելեֆօն № 590
Հիւանդներին ընդունում են հետևեալ մասնագէտ բժիշկները.
ԲԱԼԱՐՋԵՎ Լ. Ի.—երեխաների հիւ., ամեն օր, բացի կիրակի օր., 2—3 ժ. ցեր.։
ԳԱՄԲԱՇԻՁԷ Վ. Դ.—ներքին եւ երեխ., ամեն օր, բացի կիրակի օր., 11—12 ժ. ցեր.։
ԳԵԴԵՎԱՆԻ Մ. Ա.—ջղային եւ էլէկտր., երկուշ., չորեքշ., ուրբաթ, $10\frac{1}{2}$—11 ժ. առ.
ԳՈՒՐԿՕ Ա. Գ.—ներքին, շաբաթ՝ 1—2 ժ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԿԱՐՇԻՆ Ա. Ա.—կաշուի եւ վեներ., ամեն օր, բացի կիրակի օր., $2\frac{1}{2}$—$3\frac{1}{2}$ ժ. ցեր.։
ՄԱՂԱԼՈՎ Գ. Գ.—ներքին, երեքշ. և շաբաթ, 10—12 ժ. առ.։
ՄԱՆՍՎԷՏՈՎ Վ. Մ.—ներքին, երկուշ., հինգշ. և շաբաթ, 1—2 ժ. ցեր.։
ՄԵԼԻՔՈՎ Ն. Մ.—վիրաբուժ. եւ կանանց, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։
ՄՈՒՍԽԵԼՕՎ Վ. Ս.—աչքի, երկուշ., չորեքշ. և ուրբաթ, 2—$2\frac{1}{2}$ ժ. ցեր.։
ՓԻՐԱԴՕՎ Բ. Բ.—վիրաբուժ., ամեն օր՝ 11—12 ժ. առ.։
ՊՕՊՕՎ Բ. Ա.—ականջի, կոկորդի եւ քթի, ուրբաթ, 2—$2\frac{1}{2}$ ժ. ցեր.։
ՌՑԽԻԼԱՁԷ Ն.—ատամի, ամեն օր՝ 9—10 ժ.
ՍՕԲՕԼԵՎՍԿԻՅ Գ. Վ.—վիրաբուժ., ամեն օր՝ 10—11 ժ. առ.։
ՏԻԿԱՆԱՁԷ Ի. Ե.—կանանց եւ մանկաբ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ՖԷՕԴՕՐՕՎ Ե. Գ.—միկրօսկոպ., քիմիական և բակտերիօլօգ. վերլուծումներ։
1017. 100—12

ՎՕԿԶԱԼՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲՈՒԺԱՐԱՆ
Երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի
Տելեֆօն 695
Ս. ՎԱՇԱԿՄԱՁԷ ատամնաբոյժ, ամեն օր, 9—10 ժ. առ.։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
ԴԻԱՍԱՄԻՁԷ սիֆիլիս, վեներ. եւ կաշուի հիւ. ամեն օր, $11\frac{1}{2}$—$12\frac{1}{2}$ ժ.
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ., 1—2 ժամը։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ, ամեն օր 12—1 ժ. բացի կիրակի օրերից, կոկորդի քթի և ականջի։
Վ. Ս. ՄՈՒՍԽԵԼՕՎ երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը, 1—$1\frac{1}{2}$ ժ., աչքի հիւանդ.։
Ն. Գ. ՖԷՕԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 11—12 ժ., ներքին և երեխայոց հիւանդ.։
Հիւանդանոցում կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կօպէկ։
1032. 100—10

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱԶ" ՀԻՒՐԱՆՈՑ
Երեւանեան հրապարակ, տ. Միրզօյեանի, տելեֆօն 358.
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Անպայման մաքրութիւն, անդորրութիւն և հանգստութիւն, էլեկտրական լուսաւորութիւն, տելեֆօն և վաննաներ։ 50 համարներ՝ 1 րուբ. սկսած։ Քաղաքավարի և շուտափոյթ աշխատող ծառայողներ։
Գ. պ. վօյաժօրներին և ամսով վարձողներին մեծ ԶԵՂՋ
ՄԵՆԻՒ
I. ճաշ՝ 2 կեր.՝ 60 կ., 1 բ. օղի և 1 բ. գինի։ II. ճաշ՝ 3 կեր.՝ 75 կ., 1 բ. օղի, 1 բ. գինի, 1 թաս սուրճ։
I. ճաշ՝ 4 կեր. 1 ր., 1 բ. օղի, կէս շ. գինի և 1 թ. սուրճ։ IV. ճաշ՝ 5 կեր. 1 ր. 50 կ., 1 բ. օղի, կէս շ. գ. և 1 թ. սուրճ
Յարգանքով՝ Ի. Կօրչիլայա և Ն. Սիխարուլիձէ
(օ. մ.) 870. 100—20

ՁԿՆԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂ Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ
Պուշկինսկայա փող., տ. Սունդուկեանցի № 23, ռուսաց սեմինարիայի հանդէպ
ՏԵԼԷՖՕՆ № 395
ՏԵԼԷՖՕՆ № 395
Ամեն օր անընդհատ ստացվում են օսէտրինա, սէվրիւգա, լասօսինա և հատիկաւոր խաւեար, նոյնպէս և ձկնեղէն-մթերքներ։ Վաճառվում են բարեխիղճ գներով։
Յարգանքով՝ Ս. Ղուկասեան
(օ. մ.) 919. 20—16

ԹԻՖԼԻՍԻ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են
Երգեցողութիւն ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ փոխադրեալ և դաշնագրեալ յերիս ի չորիս ձայնս ի ձեռն Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ, գինն է 8 ր.։
(Alto) երգեցողութիւն ս. պատարագի վասն քառաձայն խառն խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 1 ր. 50 կ.։
(Basso) երգեցողութիւն ս. պատ. վասն եռաձայն արական խմբի (ի զգեստաւորին քահանայի), գ. 2 ր.։
(Soprano) երգեցողութիւն ս. պատ. վասն քառ. խառն խմբի (ի զգեստ. քահ.), 1 ր. 50 կ.։
(Tenore) երգեցող. ս. պատ. վասն եռաձ. արական խմբի (ի զգեստ. քահ.), 2 ր.։
Դիմել՝ Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. 854 (չ.) 10—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Թելադրութեան, արտագրութեան և բազմաթիւ քերականական վարժութիւնների օրինակներով։
գինն է 10 կօպ.
Դիմել՝ Александрополь, учителю М. Тарахчіанъ.
(օ. մ.) 1085 3—1

Լոյս տեսաւ
Մ. ՋՄՇԿԵԱՆԻ
1910 Թ. „ԾՈՑԻ" ՕՐԱՑՈՅՑԸ
յայտնի հեռաքրքրական գուշակութիւններով։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Ջմշկեան։
(ե. շ.) 1086. 12—1

200 ՌՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ
ով կապացուցի, թէ մեր ապրանքը չէ համապատասխանում գնին. 12 ր. տեղ 3 ր. 95 կ. ուղարկում ենք 17 անհրաժեշտ արժէքաւոր իր. 1) սև պողպ. ժամ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ առանց բանալիի լարվող ժամ., 8 տարվայ երաշխաւոր. 2) գեղեցիկ, չը սևացող շղթայ. 3) նոյնպիսի բրելօկ. 4) զամշի պարկ, ժամ. փչանալուց պահելու. 5) կաշուէ նորաձև քսակ 6 բաժ. 6) շահաւէտ նորոյթ—ամերիկակ. անվտանգ «Սանիտա» ածելի, որով ամեն ոք կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկէլի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. գուլպէ մատանի «Օպալ» քարով. 11) Պարիզի նորոյթ «Պլատօզ», որը բնականօրէն ցոյց է տալիս զանազան տեսարաններ. 12—17) 6 հատ հետաքրքրաշարժ նկարներ «Պլատօզի» համար։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 զարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն ստանալուն պէս, վեր. վճ. և առանց կանխավճ.։ Նոյնպիսի զարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամաց. 4 ր. 50 կ. 2-ր 8 ր. 50 կ.։ Յիշեալ զարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 ր. թանգ։ Ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ)։ Հասցէն՝ Т-во ЗАРЯ Варшава.
Խնդրում ենք հասցէն կարել և կպցնել ծրարի երեսին։
(B. 63520) 1019. 11—2

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми.
Большая Ванкская № 3.